Չեփագոտվել են առնետի լյարդի կորիզային ֆոսֆոլիպիդների ընդհանուր պարունակությունը և դրանց առանձին ֆրակցիաների բացարձակ քանակական փոփոխությունները էստրադիոլի առանձին և ցիսպլատինի հետ համատեղ *in vivo* ազդեցությունից հետո: Պարզվել է, որ ի տարբերություն ցիսպլատինի ազդեցության, որը հանգեցնում էր առնետի լյարդի կորիզային ֆոսֆոլիպիդների ընդհանուր քանակի կրճատմանը, էստրադիոլի առանձին ազդեցության արդյունքում գրանցվում է ֆոսֆոլիպիդների բացարձակ պարունակության աճ 62 %-ով: Ցիսպլատինի և էստրադիոլի համատեղ կիրառման դեպքում ֆոսֆոլիպիդների ընդհանուր քանակն աճում է ընդամենը 13 %-ով: Գրանցված փոփոխությունները տարբեր կերպ են անդրադառնում առանձին ֆրակցիաների բացարձակ քանակների վրա: Առավել մեծ ուշադրության են արժանի ցիսպլատինի և էստրադիոլի համատեղ ազդեցության ժամանակ ստացված փոփոխությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, կարող են կարևոր լինել ցիսպլատինի տոքսիկության և անցանկալի կողմնային ազդեցությունների նվազեցման առումով:

Ցիսպլատին – էստրադիոլ – առնետի լյարդ – ֆոսֆոլիպիդներ

Исследовалось содержание общих фосфолипидов и их индивидуальных фракций в препаратах ядер клеток печени крыс при *in vivo* отдельном воздействии эстрадиола и при комбинированном с цисплатином его применении. Показано, что в отличие от воздействия цисплатина, которое приводит к сокращению тотального содержания ядерных липидов, в результате отдельного применения эстрадиола регистрируется повышение общего количества ядерных фосфолипидов на 62 %. При совместном применении эстрадиола и цисплатина общее количество ядерных фосфолипидов повышается всего на 13 %. Эти изменения по-разному влияют на содержание индивидуальных фракций ядерных фосфолипидов. Среди выявленных изменений большего внимания заслуживают сдвиги, обнаруживаемые при сов-

местном воздействии цисплатина и эстрадиола, поскольку они, по всей вероятности, могут быть связаны со снижением токсичности цисплатина и смягчением нежелательных побочных эффектов, вызванных им.

Цисплатин – эстрадиол – печень крысы – фосфолипиды

It is well known that the platinum drug cisplatin (*cis*-diaminedichloroplatinum (II)) is widely used for the treatment of many malignancies. Cisplatin is clinically used as adjuvant therapy of cancers aiming to induce tumor cells death [6, 7]. However, it should be noted that cisplatin damages tumor cells and normal ones. Cisplatin induces cytotoxicity by alterations of transcription, DNA replication processes, via induction of all pathways of apoptosis [6, 7]. The effectiveness of cisplatin is dose-dependent, although its use in higher concentrations is limited by several side effects, such as nephrotoxicity, neurotoxicity, ototoxicity and others. These side effects might lead to intoxication of the whole body [11, 14, 16]. It was revealed that the joint use of steroid hormone (estradiol/progesterone) and cisplatin resulted to reduced cisplatin-induced toxicities [5, 9, 10, 15].

At present it is well known that nuclear lipids are major regulators of many essential cellular processes such as DNA replication, transcription and gene expression [1, 2, 17]. Recent advances demonstrated the involvement of nuclear lipids in remodeling of chromatin and epigenetic regulation of gene expression [12, 13]. It seems impossible to exclude the significance of nuclear lipids quantitative alterations for cisplatin antitumor effects [8].

Our previous results showed the reliable changes in total quantities of nuclear phospholipids and in content of their individual fractions of rat liver cells after the cisplatin *in vivo* action [8]. Regulatory role of nuclear phospholipids via their implications in DNA replication, transcription, chromatin assembly, acetylation and methylation of histones, and in other distinct nuclear processes is well-known. Taking into consideration the cisplatin-depended nuclear phospholipid alterations, it is assumed that the implementation of cisplatin antitumor effects through these changes could not be excluded. On the other hand, it has already shown, that estradiol and progesterone showed a beneficial effect in elimination of cisplatin-induced nephrotoxicity [10]. In view of the above developments it seems interesting to explore the cisplatin and estradiol separate and joint *in vivo* action on rat liver nuclear phospholipids content.

In this paper the alterations of quantities of total phospholipids as well as changes in their individual fractions content in nuclear preparations from rat liver cells after estradiol separate and its joint *in vivo* action with cisplatin were investigated.

Materials and methods. The investigation was performed on adult female albino rats (120-150 g weight). The animals were divided into 4 groups. Group 1 is a control group of animals without treatment. Animals of groups 2 and 4 received single dose of cisplatin (8 mg/kg). Cisplatin was injected peritoneal. Exposition time for cisplatin was 24 hours. Group 3 was treated with estradiol (200 mcg/kg, injected peritoneal). Exposition time for estradiol was 4 hours. Animals from Group 4 within 20 hours after the cisplatin injection (4 hours before decapitation) received the same single dose of estradiol. All animals were killed by decapitation through corresponding time. Before extraction of the liver, perfusion through the portal vein with ice-cold saline was done in order to remove the remaining blood. Rat liver nuclei were isolated by the method of Blobel and Potter [4]. Phospholipid extraction was carried out by Bligh and Dayer [3]. The fractionation of phospholipids was performed by micro thin layer chromatography (micro TLC) using 6x9 cm² plates with L silicagel and chloroform-methanol-water in ratio 65:25:4 as a dividing mixture. After the chromatography the plates were dried up at 20°C and were treated by 15.6% CuSO₄ in 8% phosphoric acid. Then the elaborated plates were heated at 180°C for 15 minutes. The quantitative estimation of

separated and specific died phospholipids was carried out by special computer software FUGIFILM Science Lab 2001 Image Gauge V 4.0, which was destined for densitometry. Obtained results were treated by statistics.

Results and Discussion. The total quantities of rat liver cells nuclear phospholipids in baseline and after the cisplatin and estradiol separate and joint *in vivo* action are provided in tab. 1 (tab.1). The total amount of rat liver cells nuclear phospholipids after treatment with the antitumor drug cisplatin decreased by 10% [8]. On the contrary, estrogen treatment leads to increase of phospholipids content by 62% in rat liver nuclear fraction (tab.1). The combined injection of cisplatin and estradiol increased the quantity of nuclear total phospholipids by 13.5% in comparison to baseline, although in comparison with estradiol received group of animals, it was reduced by 48.5 % (tab.1 and fig.1). The results confirm that cisplatin and estradiol were demonstrated opposite effects on total quantity of nuclear phospholipids. However, in the case of joint action these effects were summed up (tab. 1 and fig.1).

Table 1. Total phospholipids content (in mcg/g of tissue) in nuclear preparations of rat liver cells in baseline and after the cisplatin and estradiol separate and joint *in vivo* action

Variants	Baseline	Cisplatin	Estradiol	Cisplatin+ Estradiol
mcg/g tissue	3700,00±61,50	*3337,00±51,30 ¹	*6000,00 ±172,57	*4200 ±145,00

1-our previous results* – $p < 0,05$




Fig. 1. Changes in total phospholipids content in nuclear preparation of rat liver cells in baseline and after the cisplatin and estradiol separate and joint treatment.
1 – baseline, 2 – after the cisplatin action, 3 – after estradiol action,
4 – after joint action of cisplatin and estradiol

The fractionation of nuclear phospholipids by the microTLC method revealed seven individual phospholipids in baseline and in the case of cisplatin and estradiol separate and joint action. This means that neither cisplatin and estradiol separate nor

combined action cause qualitative changes. Phosphatidylserine, sphingomyelin, phosphatidylinositol, phosphatidylcholine, phosphatidylethanolamine, cardiolipin and phosphatidic acid were obtained among the phospholipids of rat liver cells nuclei preparations. Phosphatidylcholine and phosphatidylethanolamine were the major components to form more than 65% of total phospholipids amount in baseline, while the percentage of the other five fractions varied within the range of 4-10%. (tab. 2).

Table 2. The relative content (in percentage) of individual fractions of phospholipids in nuclear preparations of rat liver cells in baseline and after the cisplatin and estradiol separate and joint action.

N	Phospholipids	Baseline	Cisplatin	Estradiol	Cisplatin+ Estradiol
1	Phosphatidylserine	5.80±0.34	3.90±0.28	3.32±0.22	5.35±0.23
2	Sphingomyelin	7.60±0.33	5.60±0.22	4.58±0.24	7.40±0.1
3	Phosphatidylinositol	10.40±0.24	11.10±0.25	5.40±0.42	9.04±0.21
4	Phosphatidylcholine	39.70±0.40	45.80±0.42	51.24±1.07	40.20±1.23
5	Phosphatidylethanolamine	26.10±0.28	26.00±0.39	26.30±0.43	23.60±0.87
6	Cardiolipin	4.80±0.21	3.90±0.23	3.63±0.27	5.2±0.33
7	Phosphatidic acid	5.60±0.20	3.70±0.15	5.53±0.26	9.17±0.45
Total content		100	100	100	100

It is characteristic that the relative content of these individual fractions was not exposed to considerable alterations after the cisplatin and estradiol separate action as well as in case of its combined treatment. It must be mentioned that more significant changes undergo the relative content of phosphatidylcholine, which increased under the separate action of cisplatin and estradiol. On the other hand, after the joint action of cisplatin and estradiol, the baseline level of phosphatidylcholine relative content was restored (tab. 2).

Taking into consideration the significant changes in total nuclear phospholipids content after the cisplatin and estradiol separate and joint *in vivo* action the necessity arises to determine the changes in absolute quantities of individual fraction of lipids in all variants. Calculation results are presented in tab. 3. Individual fractions of phospholipids of rat nuclei exhibit different sensitivity to cisplatin treatment. The absolute content of phosphatidylinositol and phosphatidylcholine remained unchanged after the cisplatin action, while the quantities of all the other decreased reliably. Absolute content of phosphatidylserine, sphingomyelin, phosphatidylethanolamine, cardiolipin and phosphatidic acid reduced by 41.4%, 35.5%, 15.2%, 33.3% and 41.3% respectively. These obtained alterations in lipid quantity of rat liver nuclei cells are consequences of deep and multiform transformation of nuclear lipids metabolism caused by antitumor drug cisplatin [8]. After the estradiol alone action as well as in case of cisplatin and estradiol joint treatment the absolute quantity of phosphatidylserine and sphingomyelin remained unchanged. Changes were not found in quantity of phosphatidylinositol after the joint action of cisplatin and estradiol, while estradiol alone action decreased the content of this phospholipid by 15%. Among the nuclear phospholipids, the phosphatidylcholine exhibits the greatest susceptibility to estradiol alone action. The absolute quantity of this phospholipid increased by 110% in comparison with baseline as well as with cisplatin separate action. However, it should be noted that cisplatin and estradiol joint action lead to increased quantity of phosphatidylcholine only about 18 % (tab.3 and fig.2).

Table 3. The absolute quantities (in micrograms per gram of tissue) of individual phospholipid fractions in nuclear preparations of rat liver cells in baseline and after the cisplatin and estradiol separate and joint action

hospholipids	Baseline	Cisplatin	Estradiol	Cisplatin+Estradiol
Phosphatidylserine	215.00±16.00	*126.00±14.00	199.00±13.16	222.00±9.66
Sphingomyelin	290.00±20.00	*187.00±20.00	275.00±14.4	307.00 ±8.83
Phosphatidylinositol	382.00±22.00	374.00±33.00	**324.00±25.2	391.00 ±8.80
Phosphatidylcholine	1465.00±53.00	1592.00±16.00	*3074.00±62.20	*1726.00 ±51.65
Phosphatidylethanolamine	962.00±28.00	*816.00±38.00	*1578.00±25.80	950.00 ±36.53
Cardiolipin	180.00±15.00	*120.00±18.50	*218.00±16.21	*220.00 ±16.00
Phosphatidic acid	208.00±13.00	*122.00±10.00	*332.00±15.60	*384.00 ±19.00

*- $p < 0.05$; **- $p < 0.1$;




Fig.2. Changes (in %) of absolute quantity of rat liver nuclear phospholipids individual fractions after the cisplatin and estradiol separate and joint action

PhS – phosphatidylserine, SM – sphingomyelin, PhI – phosphatidylinositol,
PhC – phosphatidylcholine, PhE – phosphatidylethanolamine,
C – cardiolipin, Ph.A. – phosphatidic acid

The absolute content of another nuclear phospholipid phosphatidylethanolamine has also been significantly increased by about 64 % after estradiol separate action, whereas the joint action of cisplatin and estradiol lead to recovery reference level. Cardiolipin and phosphatidic acid absolute content has been increased by 21 % and 60 % respectively after the estradiol separate action (tab. 3 and fig. 2). Estradiol and cisplatin combined treatment revealed increase of cardiolipin quantity as well as phosphatidic acid absolute content by 22 % and about 85 % respectively (tab.3 and fig.2).

It is well known, that nuclear lipids are components of the intranuclear structures, such as nuclear membrane, nuclear matrix, nucleolus and chromatin. These lipids are involved in numerous biological processes, including signal transduction and a variety of metabolic pathways [2, 17]. It is worthy to mention that metabolism of nuclear lipids is regulated independently of that of cytoplasm. Furthermore, the modification of lipid metabolism is involved in cell proliferation or apoptotic processes induced by different stimuli, including hormones and drug action. As result of lipids metabolism secondary messengers are produced in the cell nucleus, which play a pivotal role in multiple signaling networks as well as in chromatin organization and transcription control [2, 12, 13, 17].

The quantitative changes in nuclear phospholipids in case of cisplatin alone action should be considered negative side effects. However, the changes obtained in case of cisplatin and estradiol joint treatment most likely have a positive effect and may be helpful for reducing the cisplatin toxicity and eliminating its undesirable spillovers. Thus, it can be concluded that nuclear lipids are key elements for the correct functioning of all nuclear processes. The quantitative changes, that were identified, have served to elucidate how cisplatin and estradiol are show their impact in case of separate and joint action.

REFERENCES

1. Albi E., Villani M. Nuclear lipid microdomains regulate cell function. *Communicative and Integrative Biology*, 2, 1, 23-24, 2009.
2. Albi E. Role of intranuclear lipids in health and disease. *Clinical Lipidology*, 6, 1, 59-69, 2011.
3. Bligh E.G., Dyer W.J. A rapid method of total lipid extraction and purification. *Canadian Biochem. Physiol.*, 37, 911-917, 1959.
4. Blobel G., Potter V.R. Nuclei from rat liver: Isolation method that combines purity with high yield. *Science*, 154, 76-79, 1966.
5. Crona D.J., Faso A., Nishijima T.F., McGraw K.A., Galsky M.D., Milowsky M.I. A Systematic review of strategies to prevent cisplatin-induced nephrotoxicity. *Oncologist*, 22, 5, 609-619, 2017.
6. Dasari Sh., Tchounwou P.B. Cisplatin in Cancer Therapy: Molecular Mechanisms of Action. *Eur. J. Pharmacol.*, 740, 364-378, 2014.
7. Florea A.M., Busselberg D. Cisplatin as an Antitumor Drug: Cellular Mechanisms of Activity, Drug Resistance and Induced Side Effects. *Cancers*, 3, 1351-1371, 2011.
8. Gevorgyan E.S., Yavroyan Zh.V., Hakobyan N.R., Hovhannisyan A.G. Cisplatin action on phospholipid composition in nuclear fraction of rat liver cells. *Biolog. Journal of Armenia*, 61, 4, 20-24, 2009.
9. Ghasemi M., Nematbakhsh M., Pezeshki Z., Soltani N., Moeini M., Talebi A. Nephroprotective effect of estrogen and progesterone combination on cisplatin-induced nephrotoxicity in ovariectomized female rats. *Indian J. Nephrol.*, 26, 3, 167-175, 2016.
10. Grott M., Karakaya S., Mayer F., Baertling F., Beyer C., Kipp M., Kopp H.G. Progesterone and estrogen prevent cisplatin-induced apoptosis of lung cancer cells. *Anticancer Res.*, 33, 3, 791-800, 2013.
11. Hanigan M.H., Devarajan P. Cisplatin nephrotoxicity: molecular mechanisms. *Cancer Therapy*, 1, 47-61, 2003.
12. Kuvichkin V.V. DNA-Lipids-Me²⁺ complexes structure and their possible functions in a cell. *Journal of Chem. Biology & Therapeutics*, 1, 1, 1-6, 2016.
13. Kuvichkin V.V. DNA-Lipids Interactions in Nuclear Pore Assembly and Hormone Actions *Ann Endocrinol Metab.*, 1, 1, 1-7, 2017.
14. Miller R.P., Tadagavadi R. K., Ramesh G., Reeves W.B. Mechanisms of cisplatin Nephrotoxicity. *Toxins*, 2, 2490-2518, 2010.
15. Nematbakhsh M.I., Pezeshki Z., Eshraghi Jazi F., Mazaheri B., Moeini M., Safari T., Azarkish F., Moslemi F., Maleki M., Rezaei A., Saberi Sh., Dehghani A., Malek M., Mansouri A., Ghasemi M., Zeinali F., Zamani Z., Navidi M., Jilanchi S., Shirdavani S., Ashrafi F.. Cisplatin-Induced Nephrotoxicity; Protective Supplements and Gender Differences. *Asian Pac J Cancer Prev.*, 18, 2, 295-314, 2017.
16. Silconi Ž.B., Benazic S., Milovanovic J., Arsenijevic A., Stojanovic B., Milovanovic M., Miller R.P., Tadagavadi R.K., Ramesh G., Reeves W.B., Mechanisms of cisplatin Nephrotoxicity. *Toxins*, 2, 2490-2518, 2010.
17. Viola-Magni M., Gahanin P.B. Possible Roles of Nuclear Lipids in Liver Regeneration. Chapter 4 of Book "Liver Regeneration" edited by Baptista P. M., 987, 2012.

Received on 15.11.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (71), 2019

ՃԱԳԱՐԻ ՈՐՈՇ ՕՐԳԱՆՆԵՐԻ D-ԱՄԻՆԱԹՅԱՅԻՆ ՕՔՍԻԴԱԶԻ ԵԼԱՆՅՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՐԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Յ.Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Է.Խ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, Ա.Յ. ԹՈՉՈՒՆՅԱՆ

ԵՊՀ, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոն
hkarapetyan@ysu.am

Ցույց է տրված, որ D-ամինաթթվային օքսիդազը ճագարի տարբեր օրգաններում ունի լայն ելակայնային յուրահատկություն: Հետազոտված 7 D-ամինաթթուներից արտահայտված ուժգնությամբ դեզամինացվել են D-ալանինը, D-թիրոզինը և D-արգինինը: Ուսումնասիրվել է ծանր մետաղների իոնների (Ni^{2+} , Fe^{2+} , Cu^{2+} , Zn^{2+} , Cd^{2+} , Co^{2+}) ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդազի ակտիվության վրա ճագարի ուղեղում, լյարդում և երիկամներում:

D-ամինաթթվային օքսիդազ – D-ամինաթթու – ծանր մետաղների իոններ

В некоторых органах кролика выявлена D-аминокислотная оксидаза. Показано, что фермент имеет широкую субстратную специфичность. Из исследованных 7-ми D-аминокислот более интенсивно дезаминировались D-аланин, D-тирозин и D-аргинин. Изучено влияние ряда ионов тяжелых металлов (Ni^{2+} , Fe^{2+} , Cu^{2+} , Zn^{2+} , Cd^{2+} , Co^{2+}) на активность D-аминокислотной оксидазы печени, почек и мозга.

D-аминокислотная оксидаза – D-аминокислота – ионы тяжелых металлов

The D-amino acid oxidase was detected in a number of rabbit organs. It has been shown that the enzyme has broad substrate specificity. Out of 7 D-amino acids studied, the D-alanine, D-tyrosine and D-arginine amino acids were more intensively deaminated. The effects of a number of heavy metal ions (Ni^{2+} , Fe^{2+} , Cu^{2+} , Zn^{2+} , Cd^{2+} , Co^{2+}) on the D-amino acid oxidase activity of the liver, kidneys and brain were studied.

D-amino acid oxidase – D-amino acid – heavy metal ions

Ամինաթթուների փոխանակության ընդհանուր օրինաչափություններից է նրանց օքսիդային դեզամինացումը՝ L- և D-ամինաթթվային օքսիդազների մասնակցությամբ: D-ամինաթթվային օքսիդազը լայնորեն տարածված է բնության մեջ՝ միկրոօրգանիզմներից մինչև կաթնասուններ, սակայն նրանց ֆիզիոլոգիական դերը դեռևս ամբողջությամբ պարզաբանված չէ:

Հայտնի է D-ամինաթթվային օքսիդազի անմիջական մասնակցությունը միկրոօրգանիզմների նյութափոխանակության, ինչպես նաև կաթնասունների էնդոգեն D-ամինաթթուների կուտակման, նյարդային համակարգի աշխատանքի կարգավորման և ծերացման գործընթացներում [3,4,7]: Մի շարք հիվանդությունների դեպքում նյարդային հյուսվածքում, արյան շիճուկում, ողնուղեղային հեղուկում նկարագրված են ինչպես D-ամինաթթուների քանակության, այնպես էլ նրանց օքսիդազների ակտիվության փոփոխություններ: Ցույց է տրվել, որ նյարդային համակարգի նյարդակարգավորիչ D-սերինի քանակի կարգավորումը D-ամինաթթվային օքսիդազի մասնակցությամբ կարևոր նշանակություն ունի շիզոֆրենիայի, Պարկինսոնի, Ալցհեյմերի և այլ հիվանդությունների բուժման համար [4,7,9]:

Ցույց է տրվել նաև D-ամինաթթվային օքսիդազի կարևոր դերը աղիքային միկրոբիոտայի հոմեոստազի կարգավորման գործում [10]:

Վերջին տարիներին ֆերմենտի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է կապված այն փաստի հետ, որ *Rhodotorula gracilis* *Trigonopsis variabilis* խմորասնկերում հայտնաբերված D-ամինաթթվային օքսիդազը կատալիզում է ցեֆալոսպորին C-ից 7-ամինացեֆալոսպորինաթթվի առաջացման երկֆերմենտային գործընթացի առաջին փուլը: Վերջինս համարվում է բազմաթիվ կիսասինթետիկ հակաբիոտիկների աղբյուր [2,13]:

Մեծ թվով հետազոտություններ են իրականացվում հատկապես մարդու D-ամինաթթվային օքսիդազի կենսասինթեզի էպիգենետիկական կարգավորման և բջջային մակարդակով հետտրանսլյացիոն ձևափոխումների դերի պարզաբանման ուղղությամբ [9]: Կենսաբանական նմուշներում D-ամինաթթուների և նրանց օքսիդազների ակտիվության որոշման զգայուն մեթոդների կիրառումը հիմք է կարող հանդիսանալ որոշ հիվանդությունների վաղ ախտորոշման և մոնիթորինգի համար [12]:

Ուստի արդիական են այն հետազոտությունները, որոնք ուղղված են տարբեր օրգանիզմներում D-ամինաթթվային օքսիդազների էլանյութային յուրահատկության բացահայտմանը [1]:

Մեր նպատակն է եղել ուսումնասիրել ճագարի որոշ օրգաններում (երիկամներ, լյարդ, ուղեղ) D-ամինաթթվային օքսիդազի էլանյութային յուրահատկությունը տարբեր D-ամինաթթուների նկատմամբ, ինչպես նաև հետազոտել որոշ ծանր մետաղների իոնների ազդեցությունը ֆերմենտի ակտիվության վրա:

Նյութ և մեթոդ: Հետազոտություններն իրականացվել են սմման և խնամքի միևնույն պայմաններում գտնվող 2-2.5 կգ զանգված ունեցող *Oreictologus cuniculus domesticus* ճագարների վրա: Կենդանիների գլխատումից հետո արագ անջատվել են լյարդը, երիկամները և ուղեղը, պատրաստվել է 10%-անոց հոմոգենատ 0,1 Մ Na-ֆոսֆատային բուֆերում (pH 8,3): Կորիզային ֆրակցիան և հյուսվածքային մագնորդները հեռացնելու նպատակով հոմոգենատը ցենտրիֆուգվել է 4000 g արագությամբ 15 րոպե:

D-ամինաթթվային օքսիդազի ակտիվությունը որոշելու նպատակով 1 մլ ֆերմենտային պատրաստուկը ինկուբացվել է 37°C-ում, 60 րոպեների ընթացքում, 1.5 մլ Na-ֆոսֆատային բուֆերում (pH 8,3) համապատասխան 50 մկմոլ էլանյութերի (D-ալանին, D-վալին, D-իզոլեյցին, D-թիրոզին, D-արգինին, D-լիզին, D-ասպարազին) առկայությամբ: 60 րոպե անց ռեակցիան կանգնեցվել է 1 մլ 20%-ոց եթԷ-ով, առաջացած ամոնիակի քանակությունը որոշվել է միկրոդիֆուզիոն մեթոդով: Ֆերմենտի ակտիվությունը ներկայացվել է առաջացած NH_3 -ի քանակով՝ 1 գ սպիտակուցի համար: D-ամինաթթվային օքսիդազի վրա ծանր մետաղների իոնների (Ni^{2+} , Fe^{2+} , Cu^{2+} , Zn^{2+} , Cd^{2+} , Co^{2+}) ազդեցությունը հետազոտելու նպատակով ինկուբացվող խառնուրդին ավելացվել է մետաղի իոն (25 մկմոլ /մլ նմուշում):

Ստացված տվյալները ելթարկվել են վիճակագրական մշակման “BIOSTAT” համակարգչային ծրագրով: Հավաստիությունը որոշվել է ըստ Ստյուդենտի t չափանիշի:

Արդյունքներ և քննարկում: D-ամինաթթվային օքսիդազը ՖԱԴ-կախյալ օքսիդազների գործունեության մեխանիզմների հիմնական օրինաչափությունների հետազոտման մարկերային ֆերմենտ է: Համաձայն գրականության տվյալների [9], մարդու D-ամինաթթվային օքսիդազի համար լավագույն էլանյութեր են հիդրոֆոբ և ծավալուն ամինաթթուները, իսկ գլիցինը և գլուտամինաթթուն ֆերմենտի կողմից չեն ենթարկվում դեզամինացման:

Մեր կողմից ուսումնասիրվել է ճագարի լյարդի, երիկամի և ուղեղի D-ամինաթթվային օքսիդազի էլանյութային յուրահատկությունը: Համաձայն ստացված տվյալների (աղ. 1), D-ամինաթթվային օքսիդազի ակտիվությունը հայտնաբերվել է բոլոր հետազոտված օրգաններում, որտեղ էլանյութերը տարբերվել են իրենց դեզամինացման աստիճանով: Հետազոտված 7 ամինաթթուներից D-ալանինի, D-թիրոզինի և D-արգինինի դեպքում ֆերմենտը դրսևորել է բավականին բարձր ակտիվություն: Նշված ամինաթթուներն առավել ուժգին դեզամինացվել են ուղեղում, ընդ որում D-թիրոզինի դեպքում ֆերմենտի ակտիվությունը կազմել է 43.05, D-ալանինի դեպքում՝ 24.35, իսկ D-արգինինի դեպքում՝ 34 մկմոլ NH_3 1 գ սպիտակուցի հաշվարկով:

Բոլոր հետազոտված ամինաթթուներից ամենացածր ակտիվությամբ դեզամինացվել են ուղեղում՝ D-վալին, երիկամում՝ D-լիզին, լյարդում՝ D-իզոլեյցին ամինաթթուները (աղ. 1): Լյարդում ըստ դեզամինացման աստիճանի հետազոտված ամինաթթուների հերթականությունն եղել է՝ D-արգինին > D-լիզին > D-ասպարազինաթթու > D-ալանին > D-վալին > D-թիրոզին > D-իզոլեյցին: D-իզոլեյցին ամինաթթվի տարբերակում ֆերմենտի ակտիվությունը D-արգինինի համեմատությամբ եղել է 4.2 անգամ ավելի ցածր (աղ. 1):

Աղյուսակ 1. D-ամինաթթվային օքսիդազի ակտիվությունը ճագարի տարբեր օրգաններում (n=5, p<0,05)

Ելանյութ / օրգան	Ֆերմենտի ակտիվություն /մկմոլ NH ₃ l գ սպիտակուցում/		
	լյարդ	երիկամ	ուղեղ
D-ալանին	11.29 ± 0.33	22.82 ± 0.68	24.35±0.73
D-վալին	8.23 ± 0.24	21.16 ± 0.63	0.94 ± 0.02
D-իզոլեյցին	7.05 ±0.21	15.05 ± 0.45	4.94 ± 0.14
D-թիրոզին	10.35 ± 0.31	17.64±0.52	43.05 ± 1.29
D-արգինին	29.48±0.88	15.52±0.46	34 ±1.02
D-լիզին	24.7±0.74	5.88±0.17	11.76 ±0.35
D-ասպարազինաթթու	18.35 ± 0.55	8.94 ± 0.26	36.7 ±1.10

Երիկամում դեգամինացման ամենաբարձր ցուցանիշ է գրանցվել D-ալանինի տարբերակում՝ 22.82 մկմոլ NH₃, ինչը 3.9 անգամ ավելի բարձր է D-լիզինի համեմատ: Ֆերմենտի ակտիվությունը ելանյութի նկատմամբ երիկամում ներկայացված է հետևյալ շարքով՝ D-լիզին >D-ասպարազինաթթու > D-իզոլեյցին >D-արգինին> D-թիրոզին > D-վալին> D-ալանին:


Այսպիսով, պարզվել է, որ ճագարի լյարդի, երիկամի և ուղեղի D-ամինաթթվային օքսիդազն օժտված է լայն ելանյութային յուրահատկությամբ: Համաձայն գրականության տվյալների, տարբեր աղբյուրներից անջատված D-ամինաթթվային օքսիդազների ամինաթթվային հաջորդականության մեջ հայտնաբերված են պահպանողական հատվածներ (189–202, 299–312 և 326–341), որոնք ձևավորում են ակտիվ կենտրոնի կատալիտիկ հատվածը, որտեղ տեղավորված են կատալիզի համար պատասխանատու Ասն192, Արգ302 և Թիր326 ամինաթթուները [1]: Առանձնահատուկ է այն փաստը, որ Արգ302 ամինաթթվի -C-ատոմի շարժունակությունը բավականին սահմանափակ է կից գտնվող Պրո303 և Թիր326 ամինաթթվային մնացորդներով, որոնք ապահովում են ելանյութի մուտքը ակտիվ կենտրոն: Այս գործընթացում մասնակցում է նաև Գլի327-ը: Ֆերմենտի ելանյութ կապող դոմենում արտահայտված հոմոլոգիա չի հայտնաբերված, ինչով պայմանավորված է տարբեր աղբյուրներից անջատված ֆերմենտների լայն ելանյութային յուրահատկությունը, որը տատանվում է բավականին լայն տիրույթում [1]:

Շրջակա միջավայրը աղտոտող նյութերի շարքում հատուկ տեղ են զբաղեցնում ծանր մետաղները, քանի որ ի տարբերություն անկայուն և արագ վերափոխվող աղտոտող այլ նյութերի ծանր մետաղների միացությունները երկարատև ժամանակի ընթացքում պահպանում են իրենց թունավոր ազդեցությունը: Ծանր մետաղների հավելյալ բանականության վնասող ազդեցությունը կենդանի օրգանիզմներում կարող է առաջ բերել հանքային նյութերի մուտքի և տեղաբաշխման խանգարումներ, ֆերմենտների ակտիվության արգելակում:


Մեր կողմից ուսումնասիրվել է որոշ ծանր մետաղների (Ni²⁺, Fe²⁺, Cu²⁺, Zn²⁺, Cd²⁺, Co²⁺) ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդազի ակտիվության վրա: Որպես ելանյութեր ընտրվել են D-ալանին, D-թիրոզին և D-արգինին ամինաթթուները: Հետազոտությունների արդյունքները ներկայացված են գծապատկեր 1, 2 և 3-ում:

Ինչպես երևում է նկ. 1-ից, երիկամում D-ալանինի դեգամինացման ակտիվության վրա ամենաբարձր արգելակող ազդեցություն դրսևորել է Ni²⁺-ը՝ 55.7% -ով, իսկ Fe²⁺-ի դեպքում այդ ցուցանիշը կազմել է 35.1%, մնացած իոնների արգելակող ազդեցությունը եղել է ցածր: D-արգինինի դեպքում իոնների ընկճող ազդեցություն ֆերմենտի ակտիվության վրա դիտվել է ըստ հետևյալ հաջորդականության՝ Ni²⁺ > Fe²⁺ > Co²⁺ > Cu²⁺ > Zn²⁺ > Cd²⁺: D-թիրոզինի դեգամինացման ակտիվության վրա ամենաբարձր արգելակող ազդեցություն ունեցել են Co²⁺ և Zn²⁺ իոնները՝ համապատասխանաբար 35.94% և 33.10%-ով:

Լյարդում Ni²⁺, Cd²⁺, Co²⁺ և Fe²⁺ իոնները գրեթե ամբողջությամբ արգելակել են D-ալանինը դեգամինացնող ֆերմենտի ակտիվությունը, բացի Zn²⁺ իոններից, որոնք ֆերմենտը ընկճել են միայն 56.5%-ով:



Նկ.1. Ծանր մետաղների իոնների ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդացի ակտիվության վրա (ճագարի երիկամ, n=5, p<0,05):




Նկ. 2. Ծանր մետաղների իոնների ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդացի ակտիվության վրա (ճագարի լյարդ, n=5, p<0,05)

Փորձարկված իոններից D-արգինինը դեգամինացնող ֆերմենտի ակտիվության վրա ընկճող ազդեցություն ցուցաբերել են Cd^{2+} և Co^{2+} իոնները, մնացած իոնները աննշան ազդեցություն են թողել ֆերմենտի ակտիվության վրա: Cd^{2+} իոնները 16.3 %-ով խթանել են D-թիրոզին ամինաթթվի դեգամինացումը, իսկ մյուս փորձարկված իոնների արգելակման աստիճանը ներկայացվում է հետևյալ շարքով $\text{Ni}^{2+} > \text{Zn}^{2+} > \text{Co}^{2+} > \text{Cu}^{2+} > \text{Fe}^{2+} > \text{Cd}^{2+}$ (Նկ. 2):

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, Ni^{2+} և Cu^{2+} իոնները բոլոր ամինաթթուների տարբերակներում ցուցաբերել են ընկճող ազդեցություն ֆերմենտի ակտիվության վրա: Zn^{2+} -ը խթանել են (12.5 %) D-թիրոզին ամինաթթվի, Cd^{2+} -ը (44.5%) և Co^{2+} (63.1 %) D-ալանինի դեգամինացման գործընթացները:

Ուսումնասիրված գրականության մեջ D-ամինաթթվային օքսիդացի ակտիվության վրա ծանր մետաղների ազդեցության վերաբերյալ հետազոտությունները բացակայում են: Այլ ֆերմենտներին նվիրված աշխատանքներում ցույց է տրված, որ ակտիվ կենտրոնում գտնվող SH-խմբերը ծանր մետաղների իոնների համար կարող են կատարել յուրահատուկ լիգանդների դեր [5]: Հայտնի է նաև, որ ծանր մետաղների իոնները կարող են ամուր համալիրներ առաջացնել թիո խմբեր պարունակող կենսամոլեկուլների հետ: Այդպիսի համալիրները կայուն են և ֆերմենտի արգելակումը ձեռք է բերում ոչ դարձելի բնույթ [14]:

Մեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը հանգեցնում է նրան, որ ծանր մետաղների իոնների արգելակող ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդացի ակտիվության վրա հնարավոր է պայմանավորված է ֆերմենտային սպիտակուցի տարածական կառուցվածքի փոփոխություններով և առանձին թիոլային խմբերի վրա ունեցած ազդեցությամբ:



Նկ. 3. Ճանր մետաղների իոնների ազդեցությունը D-ամինաթթվային օքսիդազի ակտիվության վրա ճագարի ուղեղում (n=5, p<0,05)

Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ D-ամինաթթվային օքսիդազի ակտիվությունը ճագարի տարբեր օրգաններում կախված է ինչպես երկվալենտ մետաղի իոնի, այնպես էլ հյուսվածքի տեսակից:

D-ամինաթթվային օքսիդազների լայն ելանյութային յուրահատկությունը առաջարկվում է կիրառել կենսասեստորների ստեղծման համար սննդամթերքներում և խմիչքներում համակարգային ձևով ամինաթթուների D-իզոմերների պարունակությունը որոշելու նպատակով, քանի որ D-ամինաթթուները (առաջին հերթին D-ալանինը) բակտերիաների բջջապատի բաղադրիչներ են, ուստի նրանց առկայությունը սննդամթերքներում հանդիսանում է բակտերիային վարակման ցուցանիշ [11]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ball J, Gannavaram S, Gadda G. Structural determinants for substrate specificity of flavoenzymes oxidizing d-amino acids. Arch Biochem Biophys., 660, 87-96, 2018.
2. Bolivar J.M., Nidetzky B. Oriented and selective enzyme immobilization on functionalized silica carrier using the cationic binding module Z basic2: design of a heterogeneous D-amino acid oxidase catalyst on porous glass. Biotechnol Bioeng. 109, 6, 1490-1498, 2012.
3. Errico F., Di Maio A., Marsili V., Squillace M., Vitucci D., Napolitano F., Usiello A., Bimodal effect of D-aspartate on brain aging processes: insights from animal models. J Biol Regul Homeost Agents, 27, 49-59, 2013.
4. Ferraris D.V., Tsukamoto T. Recent advances in the discovery of D-amino acid oxidase inhibitors and their therapeutic utility in schizophrenia. Curr Pharm Des. 17, 2, 103-11, 2011.
5. Khan .. Cao. Q. Latif. H. Vue X, zheng. H .." oil enzymatic actiItles and microbial community tructure with di fferent application rates of Cd and Pb'. 1. mironmentalcience19, 834-840, 2007.
6. Lin T.S., Tsai H.J., Lee C.H., Song Y.Q., Huang R.S., Hsieh-Li H.M. An improved drugs screening system reveals that baicalein ameliorates the Aβ/AMPA/NMDA-induced depolarization of neurons. J. Alzheimers Dis., 56, 959-976, 2017.
7. Madeira C., Lourenco M.V., Vargas-Lopes C., Suemoto C.K., Brandão C.O., Reis T.. D-Serine levels in Alzheimer's disease: implications for novel biomarker development. Transl. Psychiatry. 5, 561, 2015.
8. Murtas G., Sacchi S., Valentino M., Pollegioni L. Biochemical properties of human D-amino acid oxidase. Front. Mol. Biosci. 4, 88, 10.3389, 2017b.
9. Pollegioni L., Sacchi S., Murtas G. Human D-Amino Acid Oxidase: Structure, Function, and Regulation. Front Mol Biosci., 28, 107, 2018.
10. Sasabe J., Miyoshi Y., Rakoff-Nahoum S., Zhang T., Mita M., Davis B.M. Interplay between microbial D-amino acids and host D-amino acid oxidase modifies murine mucosal defence and gut microbiota. Nat. Microbiol. 1, 16125, 2016.

11. *Shoja Y., Rafati A.A.* “Enzymatic biosensor based on entrapment of d-amino acid oxidase on gold nanofilm/MWCNTs nanocompositemodified glassy carbon electrode by sol-gel network: Analytical applications for d-alanine in human serum”, *Enzyme Microb Technol.*,100, 20-27, 2017.
12. *Szilágyi B., Ferenczy G.G., Keserű G.M.* Drug discovery strategies and the preclinical development of D-amino-acid oxidase inhibitors as antipsychotic therapies. *Expert Opin Drug Discov.*, 13, 973-982,2018.
13. *Tan Q., Qiu J., Luo X., Zhang Y., Liu Y., Chen Y., Yuan J., Liao W.* Progress in One-pot Bioconversion of Cephalosporin C to 7-Aminocephalosporanic Acid. *Curr Pharm Biotechnol.*, 19, 30-42,2018.
14. *Yang Z.,Zheng.D.* "Effect of cadmium, Zinc and lead on soil enz) m activiti ". *J. Environmentcience*,18, 1135- 1141, 2006.

Ստացվել է 15.11.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (71), 2019

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒՖԼՈՆԻ ԵՎ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ (ՄՈՒՖԼՈՆ X ԸՆՏԱՆԻ ՈՉԽԱՐ) ԱՐՅԱՆ ՈՐՈՇ ՍԴԻՏԱԿՈՒՑՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԸ ԴԱԲԱՐԻ ՀԵՏ

Մ.Վ. ԲԱԴՅԱՆՅԱՆ, Գ.ՅՈՒ. ՄԱՐՄԱՐՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

badalyan.manvel@mail.ru

Ուսումնասիրվել է հայկական մուֆլոնի և մուֆլոն x ընտանի ոչխար տրամախաչումից ստացված հիբրիդների ալելոտիպերն ու գենոտիպերն ըստ տրանսֆերինի (Tf), ցերուլոպլազմինի (Cp), հեմոգլոբինի (Hb) լոկուսների և ոչխարների բնական դիմադրողականությունը դաբաղի նկատմամբ: Ցույց է տրվել, որ վիբրուսի տիտրը ամենացածրն է Tf-CC, Cp-AA և Hb-BC գենոտիպերով հիբրիդների մոտ, որոնք ցուցաբերում են բնական բարձր դիմադրողականություն դաբաղի նկատմամբ:

Արյան սպիտակուցներ – ալել – լոկուս – սպիտակուցների բազմաձևություն –
մուֆլոն – դաբաղ

Изучены аллелотипы и генотипы армянских муфлонов и гибридов (муфлон x домашняя овца) по локусам трансферрина (Tf), церулоплазмину (Cp), гемоглобина (Hb) и естественная устойчивость овец к ящуру. Было показано, что титр вируса самый низкий у гибридов с генотипами Tf-CC, Cp-AA и Hb-BC, которые проявляют естественную высокую устойчивость к ящуру.

Белки крови – аллель – локус – полиморфизм белков – Муфлон – ящур

Study of allelotypes and genotypes of armenian mouflon and hybrids (Mouflon X Domestic Sheep) according to Transferrin (Tf), Ceruloplasmin (Cp) and Hemoglobin (Hb) loci and relation with natural immunity to murrain were carried out. It was shown that the virus titer is the lowest in hybrids with Tf-CC, Cp-AA and Hb-BC genotypes, which produce a natural high resistance to murrain.

Blood proteins – allele – locus – polymorphism of proteins – mouflon – murrain

Գյուղատնտեսական կենդանիների գենետիկորեն պայմանավորված խմունիտետը ներկայումս համընդհանուր հիմնահարց է, իսկ բազմագենային պայմանավորվածություն ունեցող հատկանիշի համար գենետիկական մարկերների բացահայտումը խիստ այժմեական է և դեռ երկար ժամանակ կմնա ակտուալ [4, 6]:

Հետազոտությունները վկայում են [3], որ գոյություն ունի դրական կոռելյատիվ կապ սպիտակուցի տարբեր լոկուսների, ալելների հաճախականության, հոմոզիգոտ և հետերոզիգոտ վիճակների ու տնտեսական օգտակար հատկանիշների միջև: Ըստ մեզ հասած տվյալների տրանսֆերինի և ցերուլոպլազմինի լոկուսների առումով նման ուսումնասիրություններ քիչ են կատարվել, սակայն գոյություն ունեցողներից ուշադրության են արժանի Սադիկյուլովի և Կիմի հետազոտությունները: Նրանց ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ TfCC-CpBB, TfAC-CpAB գենոտիպով կենդանիների համեմատությամբ ոչխարների դեգերյան ցեղի Tf AC-CpBB,

Tf CC-CpAB գենոտիպով կենդանիներն ունեցել են բարձր սպանդային ելք և 1-ին տեսակի մսեղիք: Առողջ սերնդի ստացումը և մատղաշի պահպանումը անասնաբուծության կարևոր կենսատնտեսական և տեխնոլոգիական հատկանիշներ են: Ոչխարի ֆինանսական լանդրաս ցեղի Tf AB գենոտիպով կենդանիները նշված ցուցանիշներով գերազանցում են մնացած բոլոր գենոտիպերով կենդանիներին [3]: Պրեկոս ցեղի ոչխարների Tf BC գենոտիպով մաքիները աչքի են ընկնում բազմապտղությամբ և մատղաշի պահպանությամբ [1]:

Ակնհայտ է, որ անասնաբուծության տարբեր ճյուղերի ինտենսիվացումը ուղղակի կապ ունի տարբեր հիվանդությունների կանխարգելման և բուժման հետ, քանի որ վերևիներս կենդանիների մոտ առաջ են բերում զգալի տնտեսական վնասներ, որոնք պայմանավորված են նրանց մթերատվության և պտղատվության անկմամբ, ստացվող մթերքների որակի և քանակի նվազմամբ, տոհմային աշխատանքի համար նրանց ոչ պիտանելիությամբ և այլն: Սովորաբար միկրոբային հիվանդությունները տեսակարար կշռով մեծ տեղ են գրավում այն դեպքում, երբ ներկայումս առավել պատշաճ տեղ է հատկացվում կենդանիների գենետիկական դիմադրողականության բարձրացման հիմնահարցերին: Այս ուղղությամբ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ միայն նպատակամետ ընտրասերմամբ և առանց լրացուցիչ ծախսերի հնարավոր է կենդանիներին զերծ պահել բազմաթիվ հիվանդություններից:

Նյութ և մեթոդ: Հայկական վայրի մուֆլոնից արյան նմուշառումը կատարվել է Երևանի կենդանաբանական այգում 4 տարեկան 3 արու մուֆլոններից, իսկ մուֆլոնի և ընտանի ոչխարի հիբրիդից արյան նմուշը հել ակտիվատոր պարունակող վակուումային փորձանոթների միջոցով վերցվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի փորձարարական բազայում բուծվող 1.5-2 տարեկան 17 գլուխ կենդանիների լծային երակից: Արյան շիճուկը և հոմոլիզատը ստացվել է հայտնի մեթոդների շնորհիվ:

Էլեկտրոֆորեզի միջոցով ուսումնասիրվել է ոչխարների արյան Tf, Cp և Hb սպիտակուցների բազմաձևությունը:

Էլեկտրոֆորեզը իրականացվել է Դեյվիսի մեթոդով [5] 10 %-անոց պոլիակրիլամիդային ժելի վրա, Biometra ֆորմայի “Multigel-long” ֆորեզի ապարատով (աղ. 1):

Աղյուսակ 1. Արյան շիճուկի Tf, Cp և Hb սպիտակուցների էլեկտրոֆորեզի անհրաժեշտ պայմանները

Սպիտակուցը	Ժելը, %	Ժելիերկարությունը	Նմուշի տիպը	Բուժերը		Հոսանքի արումը, V	Ֆորեզի տևողությունը, ժամ
				Ժելային	Էլեկտրոդային		
Tf	10	12	1:2	0,05M տրիսHCL pH 8,8	0,016 M տրիսգլիցին pH 8,7	280	3
Cp	10	12	1:1	0,18 M տրիսHCL pH 8,8	0,016 M տրիսբորատ 9,0	290	2,5
Hb	10	12	1:1	0,2M տրիս-ցիտրատ pH 8,85	0,06 տրիս-բորատ pH 8,75	250	3,5

Ֆորեզի ավարտից հետո ժելը 60 րոպե տևողությամբ ֆիքսվել է էթանոլ, քացախաթթու, թորած ջուր (40:10:60) լուծույթում, որից հետո 30-60 րոպե ներկվել է կոմասի G-250 ներկով, այնուհետև 3 անգամ լվացվել լվացող բուժերով (քացախաթթվի 10%-անոց լուծույթ):

Ֆորեզարմի արդյունքները վերլուծվել են համապատասխան բանաձևերի միջոցով: Գենոտիպերի և ալելների հաճախականությունը որոշվել է հետևյալ բանաձևով՝

$$P_i = \frac{n_i}{N}$$

որտեղ՝ P_i -ն i ալելի հաճախականությունն է,
 n_i – ը՝ տվյալ ալելը կրող կենդանիների թիվը,
 N – ը՝ հետազոտվող կենդանիների ընդհանուր թիվը:

Առանձին լոկուսների համար գենոտիպերի հոմոզիգոտության բաժինը որոշվել է հետազոտվող կենդանիների ընդհանուր թվի սովորական համամասնության սկզբունքով:

Սպիտակուցների բազմաձևության ցուցանիշներով հոմոզիգոտության աստիճանը որոշվել է Յելդերմանի բանաձևով՝

$$SH = \sqrt{\frac{\sum (H_i - H)^2}{n}}$$

որտեղ՝ SH –ը մի քանի լոկուսներով հոմոզիգոտության միջին ցուցանիշն է,

H –ը ուսումնասիրվող հոմոզիգոտության միջին ցուցանիշն է,

n –ը ուսումնասիրվող լոկուսների քանակն է:

Մեր կողմից առաջին անգամ խնդիր է դրվել ուսումնասիրել հայկական մուֆլոնի և Նրա հիբրիդների տարբեր գենոտիպերով (ըստ Tf, Cp, Al լոկուսների) ոչխարների, պոլիմորֆ սպիտակուցների և արյան շիճուկում կառուցվածքային և ոչ կառուցվածքային սպիտակուցների առկայությունը, որը իրականացվել է իմունոֆերմենտային անալիզի (ELISA-At) միջոցով: Նման տեստերը հնարավորություն են ընձեռում բացահայտել դաբաղի վիրուսի շրջապտույտը զգայունակ կենդանիների օրգանիզմում:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտությունների վերլուծությունից (աղ. 2) ակնհայտ է դառնում, որ տրանսֆերինի լոկուսը հիբրիդների մոտ պոլիմորֆ է՝ կազմված A, C և D ալելներից, որոնց հաճախականությունը համապատասխանաբար հավասար է 0.42; 0.52 և 0.05: Ընդ որում, A ալելը հանդես է գալիս 2՝ AA (0.12) և AB (0.2) գենոտիպով: C ալելը նույնպես ձևավորում է 2 գենոտիպ՝ CC (0.2) և CD (0.23): Ինչ վերաբերում է D ալելին, ապա պետք է նշել, որ այն հանդես է գալիս մեկ գենոտիպով՝ DD: Լոկուսի հոմոզիգոտությունը կազմում է 47%:

Աղյուսակ 2. Հիբրիդների (Մուֆլոն x ընտանի ոչխար) գենետիկական կառուցվածքն ըստ Tf, Cp և Hb լոկուսների

Լոկուսը	n	Հաճախականությունը, P _i											Հոմոզիգոտության աստիճանը, %	
		Գենոտիպերը, %							Ալելները				ըստ առանձին լոկուսների	ըստ Tf, Cp, Hb լոկուսների
		AA	AB	BB	BC	CC	CD	DD	A	B	C	D		
Tf /տրանսֆերին/	17	0,12	0,2	-	-	0,2	0,23	0,05	0,42		0,52	0,05	47	29,5
Cp /ցերուլոպլազմին/	17	0,17	0,41	0,17	0,23	-	-	-	0,58	0,42	-	-	35,3	
Hb /հեմոգլոբին/	17	0,55	0,64	0	0,30	-	-	-	0,70	0,30	-	-	5,9	

Ցերուլոպլազմինի լոկուսը նույնպես պոլիմորֆ է՝ կազմված A (0.58) և B (0.42) ալելներից: A ալելը հանդես է գալիս մեկ հոմոզիգոտ՝ AA (0.17) և մեկ հետերոզիգոտ՝ AB (0.41) գենոտիպով:

Ցերուլոպլազմինի լոկուսի հոմոզիգոտության աստիճանը հավասար է 35.3 %: Հեմոգլոբինի 0 լոկուսի առումով պետք է նշել, որ այն նույնպես պոլիմորֆ է՝ կազմված A(0.70) և B (0.30) ալելներից: Հիբրիդների մոտ հեմոգլոբինի A ալելը ձևավորում է երկու գենոտիպ՝ AA (0.55) և AB (0.64), իսկ B ալելը՝ ընդամենը մեկ գենոտիպ՝ BC, որի հաճախականությունը հավասար է նույն ալելի հաճախականությանը (0.30): Լոկուսի հոմոզիգոտության աստիճանը հավասար է 5.9 %:

Ուսումնասիրվող երեք լոկուսների հիբրիդների հոմոզիգոտության աստիճանը հավասար է 29.5%:

Ինչ վերաբերվում է Հայկական մուֆլոնի ուսումնասիրված լոկուսներին (աղ. 3), պետք է նշել, որ ինչպես տրանսֆերինը, այնպես էլ ցերուլոպլազմինն ու հեմոգլոբինը մոնոմորֆ են՝ կազմված համապատասխանաբար TfA, CpA և HbA ալելներից, որոնց հաճախականությունը հավասար է 1-ի: Յուրաքանչյուր ալել դրսևորվում է 1 գենոտիպի տեսքով՝ TfAB, CpAB և HbAB, որոնց հաճախականությունը նույնպես հավասար է 1-ի:

Աղյուսակ 3. Վայրի մուֆլոնի գենետիկական կառուցվածքն ըստ Tf, Cp և Hb լոկուսների

Լոկուսը	n	Գենոտիպերը, %	Ալելները	Հոմոզիգոտությունն ըստ առանձին լոկուսների, %
Tf /տրանսֆերին/	3	AB	A	0
Cp /ցերուկալավին/	3	BC	B	0
Hb /հեմոգլոբին/	3	AB	A	0

Նման աղբատ ալելոֆոնդ և գենոտիպ ունենալը ըստ երևույթին պայմանավորված է երկարաժամկետ ինբրիդինգով, ինչն առկա է կենդանաբանական այգում: Հայկական մուֆլոնի ուսումնասիրված լոկուսների հոմոզիգոտությունը հավասար է 0%-ի:

Աղյուսակ 4. Հիբրիդների (մուֆլոն X ընտանի ոչխար) գենետիկական կառուցվածքն ըստ Tf, Cp և Hb լոկուսների և կապը կառուցվածքային և ոչ կառուցվածքային սպիտակուցների հետ

Լոկուսը/հակամարմինները		n	Գենոտիպերը, %						
			AA	AB	BB	BC	CC	CD	DD
Tf	կառուցվածքային	3	0	0	-	-	0	0	0
	ոչ կառուցվածքային	3	9.8	10.2	-	-	7.5	12.2	11.8
Cp	կառուցվածքային	3	0	0	0	0	-	-	-
	ոչ կառուցվածքային	3	8.7	11.3	13.6	11.4	-	-	-
Hb	կառուցվածքային	3	0	0	0	0	-	-	-
	ոչ կառուցվածքային	3	12.5	21.2	17.5	9.4	-	-	-

Աղ. 4-ի տվյալների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ փորձնական կենդանիներից արյան նմուշառում կատարելու վեց ամիսների ընթացքում հակադաբաղային պատվաստում չի իրականացվել, քանի որ բոլոր գենոտիպերով կենդանիների մոտ կառուցվածքային սպիտակուցների (առաջանում են դաբաղի նկատմամբ զգայունակ կենդանիներին դաբաղի դեմ պատվաստելուց հետո) տիտրը բացակայել է:

Ինչ վերաբերվում է ոչ կառուցվածքային սպիտակուցներին (3ABC – հայտնաբերվում են կենդանու արյան շիճուկում դաբաղի վիրուսով վարակվելուց 2 շաբաթ անց), որոնք առաջանում են օրգանիզմում վիրուսի առկայության դեպքում՝ պետք է նշել, որ վիրուսի տիտրը ամենացածրն է Tf-CC (7.5), Cp-AA (8.7) և Hb -BC (9.4) գենոտիպերով հիբրիդների մոտ: Վերջինս վկայում է այն մասին, որ դաբաղի վիրուսի շրջապատույտի առկայության դեպքում՝ առանց բնորոշ կլինիկայի վերոնշյալ գենոտիպով կենդանիները ցուցաբերում են բնական բարձր դիմադրողականություն նշված հիվանդության նկատմամբ:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ միևնույն պայմաններում բարձր դիմադրողականություն ունեցող կենդանիների ոչ կառուցվածքային սպիտակուցների տիտրը լինում է շատ ցածր կամ բացակայում է [7]:

Հայկական մուֆլոնի ուսումնասիրված լոկուսները մոնոմորֆ են, որտեղ հոմոզիգոտության աստիճանը հավասար է 0 %-ի, իսկ հիբրիդների մոտ հոմոզիգոտությունը կազմում է 29.5 %:

Դաբաղի նկատմամբ բնական բարձր դիմադրողականություն են ցուցաբերում Tf-CC (7.5), Cp-AA (8.7) և Hb -BC (9.4) գենոտիպերով հիբրիդները:

Ստացված արդյունքները, որպես գենետիկական մարկերներ, կարելի է օգտագործել ոչխարների ընտրասերման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Лазовский А.А.* Воспроизводительная способность овцематок в зависимости от разных типов уровня калия, гемоглобина и трансферрина. Научные основы развития животноводства в БССР, 5, с. 90-92, 1975.
2. *Садыкулов Т.С., Ким Г.Л.* Возможность использования некоторых полиморфных систем крови в селекции дегерских овец. Вест. с.-х. науки Казахстана, 8, с. 52-54, 1985.
3. *Atroshi F., Osterberg S.* Blood biochemical polymorphic trait sin relation to reproductive e performance in Finns-sheep. 30th Annual Meeting EAAP, p. 1-4, 1979.
4. *Badalyan M., Marmaryan G., Marmaryan Yu.* Polymorphism of Blood Serum Protein-Transferrin, Ceruloplasmin, Albumin – in Sheep of Karabakh Breed and the Relationship with the Natural Resistance Towards Epizootic Apathae. Scientific Papers: Animal Science and Biotechnologies, 51, 1, p. 92-96, 2018.
5. *Davis B.J.* Disc electrophoresis to human serum protein. Ann. N.-Y. Acad. Sci., 121, p. 404-427, 1964.
6. *Marmaryan G., Badalyan M., Kamalyan R.* Blood Protein Polymorphism of Small Cattle Bred in Armenia. Scientific Papers: Animal Science and Biotechnologies, 50, 1, p. 140-146, 2017.
7. *Pepoyan A.Z., Balayan M.A., Bezhanyan T., Badalyan M., Tsaturyan V., Melnikov V., Kamiya S., Natrebov and Chikindas M.* 5-Methylcytosine DNA Methylation Patterns among Gut Predominate Commensal Escherichia coli and Lactobacilli from the Balbas and Mazekh Domestic Sheep Breeds. Res Med Eng Sci., 3, 1, RMES.000513, p. 1-3, 2017.

Ստացվել է 17.12.2018



Հայաստանի կենսաբ. հանդես, 1(71), 2019

ԱՍՊԻՐԱԿԻ (*SPIRAEA* L.) ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱԴՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ն.Ն. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվ. Բուսաբանության ինստիտուտ
muradyann@list.ru

Ուսումնասիրվել են ասպիրակ ցեղի (*Spiraea* L.) բազմացման տեսակների հնարավորությունները Երևանի բուսաբանական այգու պայմաններում: Ասպիրակի տնկանյութի ստացման ամենաարդյունավետ եղանակներից են կտրոնավորումը և սերմերով բազմացումը: Բազմացման առանձնահատկությունների ուսումնասիրությունները կատարվել են Երևանի բուսաբանական այգում ներմուծված գեղազարդ ասպիրակների կտրոններով և տարբեր բուսաաշխարհագրական մարզերից ստացված սերմերով:

Սահմանվել է ուսումնասիրվող տեսակների սերմերով բազմացման և կտրոնավորման արդյունավետ ժամկետները:

Ներմուծում – բազմացում – հարմարողականություն – կտրոնավորում – արմատակալում

Изучались особенности размножения видов рода таволги (*Spiraea* L.) в условиях Ереванского ботанического сада. Наиболее эффективными способами получения посадочного материала являются черенкование и семенное размножение. Исследования проводились на декоративных видах таволги, интродуцированных в Ереванский ботанический сад ранее. Семена для интродукции были получены из различных ботанико-географических регионов мира.

Установлены эффективные сроки черенкования и семенного размножения изученных видов.

Интродукция – размножение – адаптация – черенкование – укоренение

Possibilities of reproduction of the species of genus *Spiraea* L. in the conditions of the Yerevan Botanical Garden were studied. The most effective methods to obtain planting material are propagation by cutting and seed breeding. The peculiarities of reproduction were investigated on the slips of decorative *Spiraea* species introduced in the Yerevan Botanical Garden earlier and on seeds obtained from different phyto-geographic regions. Effective periods for propagation by cutting and seed breeding of these species were found.

Introduction – breeding – adaptation – propagation by cutting – implanting

Բույսերի ներմուծման աշխատանքներում կարևորագույն խնդիր է ծառաբույսերի հարմարողականության ուսումնասիրումը գոյության նոր պայմաններում, տվյալ դեպքում Հայաստանի բուսաբանական այգիներում: Գեղազարդ թփերի ներմուծման և ներդնման հաջողությունը կանաչապատման պրակտիկայում մեծ չափով պայմանավորված է բազմացման արդյունավետ եղանակների կիրառմամբ:

Հայաստանի հանրապետության բաղաբների և բնակավայրերի կանաչապատման տեսակաշարում կարևոր տեղ է զբաղեցնում ասպիրակը, որի բարձր գեղազարդու-

թյունը և հարմարողականությունը տարբեր հողա-կլիմայական պայմաններին հնարավորություն են տալիս ավելի շատ տեսակներ ընդգրկել բուսաբանական այգիներում և տարբեր տիպի կանաչ տնկարկներում [1,2]:

Spiraea ցեղի ներկայացուցիչների մեծ մասն ունեն գեղեցիկ և ինքնատիպ սաղարթ, հեշտությամբ բազմանում են և առանձնապես պահանջկոտ չեն աճման պայմանների նկատմամբ:

Բազմացման առաջին փորձերը մշակության մեջ կատարվել են XVI դարում (*Spiraea flexuosa* Fisch.), 200 տարի անց մշակության մեջ են մտցվել *S. media* Fr. Schmidt, *S. chamaedryfolia* L. և *S. betulifolia* Pall. տեսակները [5]:

Բազմացման եղանակների մշակումը նպաստում է բարձր որակի և անհրաժեշտ բանակի տնկանյութի ստացմանը: Ասպիրանները բազմանում են սերմերով, կտրոններով, արմատային մացառներով և թփի կիսմամբ: Սերմերով կարելի է բազմացնել ասպիրակի բոլոր տեսակները, բացառությամբ հիբրիդային ծագման բույսերի: Վերջիններիս մոտ որպես կանոն սերմեր չեն ձևավորվում կամ ծլունակ չեն լինում, իսկ ծլունակ լինելու դեպքում պահպանվում են միայն մեկ ծնողական ձևի հատկանիշները: Այդ պատճառով էլ հիբրիդային տեսակները բազմանում են միայն վեգետատիվ ճանապարհով՝ կտրոններով և արմատային մացառներով:

Նյութ և մեթոդ: Ասպիրակ ցեղի բազմացման և տնկանյութի ստացման ամենաարդյունավետ եղանակներից են կտրոնավորումը և սերմերով բազմացումը: Փորձերը կատարել ենք վերջին 2-3 տարիների ընթացքում:

Վեգետատիվ բազմացման եղանակներից մեր կողմից կիրառվել է կտրոնավորումը: Կտրոններով բազմացման համար ելանյութ են ծառայել Երևանի բուսաբանական այգու տարբեր էկոլոգոաշխարհագրական հողամասերում աճող ասպիրակների տեսակները (*Spiraea japonica* L. f., *S. douglasii* Hook., *S. chamaedryfolia*, *S. x vanhouttei* (Briot) Zbl., *S. trilobata* L.):

Սերմերով բազմացման փորձերը կատարվել է հետևյալ տեսակների մոտ՝ *Spiraea alpina* Pall., *S. tomentosa* L., *S. decumbens* W. Koch, *S. betulifolia*, *S. sargentiana* Rehd., *S. media*, *S. mongolica* Maxim., *S. rosthornii* Pritz., *S. alba* Du Roi, *S. trichocarpa* Nakai, *S. fritschiana* C. K. Schneid, *S. blumei* G. Don, *S. salicifolia* L., *S. pubescens* Turcz., *S. douglasii* v *menziesii* (Hook.) Presl. և այլն: Նշված տեսակների սերմերը ստացել ենք սերմերի փոխանակման ցուցակների շնորհիվ (աշխարհի տարբեր ֆլորիստիկ մարզերից):

Արդյունքներ և քննարկում: Սերմերով բազմացումն ամենապարզ և ամենաարդյունավետ եղանակն է, որի ժամանակ բույսերի մոտ լավ ձևավորվում է արմատային համակարգը, ծաղկումն ավելի առատ է լինում: Բազմացման այս եղանակն ավելի երկարատև է, քանի որ առաջին տարում ձևավորվում է մեկ հզոր ընձյուղ, սերմնաբուսակը տարվա վերջում հասնում է ընդամենը 5-10 սմ բարձրության: Երկրորդ տարում սկսվում է արմատային համակարգի ակտիվ աճը և ձևավորվում է թուփը: Ծաղկումը տեղի է ունենում 3-4-րդ տարում: Սերմնային բազմացման թերությունն այն է, որ սերմերի մեծ մասը ծլունակ չեն լինում:

Ցանքները կատարվել են երկու ժամկետով՝ գարնանային (3-5 IV) և աշնանային (26-30 X): Ասպիրանների սերմերի ծլունակությունը պահպանվում է մինչև երկու տարի: Սերմերը ծլում են 2-4 շաբաթվա ընթացքում: Սեր պայմաններում բարձր ծլունակությամբ (80-100%) աչքի են ընկել հետևյալ տեսակները՝ *Spiraea alpina*, *S. betulifolia*, *S. media*, *S. sargentiana*, *S. mongolica*, *S. blumei*: Ծլունակության միջին ցուցանիշ (50-80%) է գրանցվել *S. fritschiana*, *S. rosthornii* տեսակների մոտ, ցածր տոկոս են կազմում (20-50%) *S. tomentosa*, *S. decumbens*, *S. trichocarpa* և այլ տեսակների սերմերը: *S. nipponica* Maxim., *S. pubescens*, *S. x cinerea* Zbl. տեսակների սերմերով բազմացման արդյունքները եղել են բացասական (ամենայն հավանականությամբ սերմերը որակյալ չեն եղել): Սերմերի որակը պայմանավորված է ինչպես տեսակին բնորոշ առանձնահատկություններով, այնպես էլ սերմերի ձևավորման տարում եղանակային պայմաններով:

Երևանի բուսաբանական այգում կատարված փորձերը ցույց են տվել, որ գարնանը կատարված ցանքերի դեպքում ավելի լավ արդյունք է գրանցվել:

Վեգետատիվ բազմացումը մեծ նշանակություն ունի բույսերի ներմուծման գործում: Ներմուծված բույսերը նոր հողա-կլիմայական պայմաններում կարող են ուշ մտնել ծաղկման և պտղաբերման շրջան, հետևաբար այդ բույսերի բազմացումը հնարավոր կլինի միայն վեգետատիվ ճանապարհով:

Աղյուսակ 1. *Spiraea* L. ցեղի ներմուծված տեսակների սերմնային բազմացման արդյունքները

Տեսակ	Բնական տարածման արեալ	Ցանքի ժամկետ	Ծլունակություն, %
<i>Spiraea alpina</i>	Արևելյան Ասիա, Սիբիր	3- 5 IV	80-100
<i>S. tomentosa</i>	Հյուս. Ամերիկա	3- 5 IV	20-50
<i>S. decumbens</i>	Եվրոպա	3- 5 IV	20-50
<i>S. betulifolia</i>	Արև. Ասիա, Հյուս. Ամերիկա	3- 5 IV	80-100
<i>S. sargentiana</i>	Արևելյան Ասիա	3- 5 IV	80-100
<i>S. media</i>	Արևելյան Ասիա, Եվրոպա	3- 5 IV	80-100
<i>S. mongolica</i>	Արևելյան Ասիա	3- 5 IV	80-100
<i>S. rosthornii</i>	Արևելյան Ասիա	26-30 X	50-80
<i>S. alba</i>	Հյուս. Ամերիկա	10-12 IV	20-50
<i>S. trichocarpa</i>	Արևելյան Ասիա	10-12 IV	20-50
<i>S. fritschiana</i>	Արևելյան Ասիա	10-12 IV	50-80
<i>S. blumei</i>	Արևելյան Ասիա	10-12 IV	80-100
<i>S. salicifolia</i>	Արև. Ասիա, Հյուս. Ամերիկա	26-30 X	20-50
<i>S. nipponica</i>	Արևելյան Ասիա	3- 5 IV	-
<i>S. pubescens</i>	Արևելյան Ասիա	26-30 X	-
<i>S. x cinerea</i>	Հիբրիդային ձև	26-30 X	-
<i>S. douglasii</i> v <i>menziesii</i>	Հյուս. Ամերիկա	3- 5 IV	20-50

Վեգետատիվ բազմացման առավելությունը կայանում է նրանում, որ պահպանվում է մայր բույսի բոլոր գեղագարդ հատկանիշները, ծաղկումը ավելի վաղ է սկսվում:

Ներկայումս կտրոնավորումը գեղագարդ թփերի բազմացման հիմնական եղանակներից է: Ընձյուղների ընտրման լավագույն ժամկետը վաղ գարունն է՝ մինչև հյուսիսային սկսվելը և բողբոջների բացվելը: Կտրոնավորման համար փայտացած ընձյուղները վերցրել ենք վաղ գարունը՝ նախորդ տարվա ընձյուղներից 8-10 սմ երկարությամբ: Հյուսվածքների առավելագույն խոնավացման համար կտրոնները 18-24 ժ տևողությամբ պահվում են ջրի մեջ, որից հետո տեղափոխվում սառը միջավայր և դրվում խոնավ ավազի մեջ: Արմատային հյուսվածքների ձևավորվելուց հետո բուսակը տեղափոխվում է հողի մեջ: Արմատային համակարգի ձևավորումը ավարտվում է երկրորդ տարում: Արմատակալման հաջողությունը կախված է կտրոնների մթերման ժամկետից, մայր բույսի տարիքից, ֆիզիոլոգիական վիճակից, ինչպես նաև՝ օդի ջերմաստիճանից և խոնավությունից [3]:

Արմատակալած կտրոններն անհրաժեշտ է տնկել բաց գրունտում, հաշվի առնելով առաջին ձմեռումից հետո պահպանված տնկանյութի տոկոսը, վեգետացիայի վերջում արմատային համակարգի վիճակը և երկրորդ տարվա աճը:

Աղյուսակ 2. *Spiraea* L. ցեղի ներմուծված տեսակների սերմնային կտրոնավորման արդյունքները

Տեսակ	Բնական տարածման արեալ	Կտրոնավորման ժամկետ	Արմատակալում, %
<i>Spiraea japonica</i>	Արև. Ասիա, Հիմալայներ	10-15 IV	70-80
<i>S. douglasii</i>	Հյուս. Ամերիկա	10-15 IV	70-80
<i>S. chamaedryfolia</i>	Արև., Կենտ. Ասիա, Եվրոպա	5-10 IV	55-70
<i>S. trilobata</i>	Արև., Կենտ. Ասիա, Սիբիր	10-15 IV	55-70
<i>S. x vanhouttei</i>	Հիբրիդային ձև	5-10 IV	70-80

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ փորձարկված բոլոր տեսակները լավ են բազմանում կտրոնավորման եղանակով: Արմատակալման լավ ցուցանիշներ (70-80 %) են գրանցվել հատկապես հետևյալ տեսակների մոտ – *Spiraea japonica*, *S. douglasii*, *S. x vanhouttei*:

Վեգետատիվ բազմացումը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում ստանալ մեծ քանակությամբ որակյալ տնկանյութ:

Spiraea L. ցեղի ներմուծված տեսակները լավ են բազմանում նաև արմատային մացառներով: Արմատային մացառներ տալու ունակությամբ աչքի են ընկնում *Spiraea douglasii*, *S. chamaedryfolia*, *S. mongolica*, *S. japonica*, *S. x vanhouttei* և մի շարք այլ տեսակներ: Այս եղանակով բազմացման արդյունքները ցույց են տալիս, որ որքան շատ են ձևավորվում արմատային մացառները, այնքան ավելի երկարակյաց է լինում թուփը, սակայն արմատային մացառներից ձևավորված բույսի ցողունների երկարակեցությունը ավելի կարճ է լինում: Մայր բույսից առանձնացված արմատային մացառները շատ լավ աճում և արագ ձևավորվում են որպես ինքնուրույն բույս [6]:

Ասպիրակ ցեղի ներմուծված բոլոր տեսակները պահանջկոտ չեն հողի նկատմամբ, սակայն բնականաբար ավելի լավ աճում, բազմանում և առատ ծաղկում են սննդանյութերով հարուստ հողերում: Արմատային համակարգը մակերեսային է, այդ պատճառով չոր եղանակային պայմաններում անհրաժեշտ է կանոնավոր ջրել, հակառակ դեպքում՝ ծաղկումը թույլ կլինի, իսկ ծաղիկների գույնը խամրած [4]:

Ստացված արդյունքները թույլ են տալիս գնահատել ուսումնասիրվող տեսակների գեղազարդ հատկանիշները, հարմարողականությունը տարբեր հողա-կլիմայական պայմանների նկատմամբ:

Կատարված փորձերի և ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ գեղազարդ ասպիրակների արդյունավետ բազմացման համար պետք է հաշվի առնել կտրոնավորման և ցանքսի ժամկետները, սերմերի որակական հատկանիշները, կտրոնավորման համար մայր բույսի տարիքը, ֆիզիոլոգիական վիճակը: Ըստ փորձերի արդյունքների կտրոնների արմատակալումը տատանվում է 55-80 %-ի սահմաններում, սերմերի ծլունակությունը՝ 20-100%:

Spiraea L. ցեղի գեղազարդ նոր տեսակների ներմուծման, բազմացման աշխատանքները շարունակվում են և ստացված նոր տվյալները կիրառարարվեն մեր հետագա աշխատանքներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аннотированный каталог деревьев и кустарников ботанических садов и дендропарков Армянской ССР. Бюлл. Бот. Сада АН АрмССР, 27, 164 с., 1985.
2. Вардадян Ж.А. Научные основы интродукции древесных растений в Армении. Ереван, 400 с., 2012.
3. Вардадян Ж.А., Манасян Г.Г., Гатрчян Г.М., Григорян Г.А. Особенности размножения некоторых декоративных древесных растений. Изв. Гос. Аграрн. Унив. Армении, 1, с. 20-25, 2011.
4. Мурадян Н.Н. Эколого-биологические аспекты интродукции представителей рода *Spiraea* L. в ботанических садах Армении. Тахтаджяния, 4, с. 113-117, 2018.
5. Плотникова Л.С. Размножение редких видов древесных растений СССР черенками. Бюлл. ГБС, 21, с. 13-21, 1981б.
6. Славкина Т.И. Дендрология Узбекистана т. 4. Ташкент, 368 с, 1972.

Ստացվել է 24.12.2018



Биол. журн. Армении, 1 (71), 2019

КОМБИНИРОВАНИЕ ИОНОВ Mg(II) И Fe(II) КАК ПОДХОД К ПОВЫШЕНИЮ ВЫХОДА ВОДОРОДА В *RHODOBACTER SPHAEROIDES*

Л.С. ГАБРИЕЛЯН

Ереванский госуниверситет, кафедра биохимии, микробиологии и биотехнологии
lgabrielyan@ysu.am

Исследовано влияние ионов металлов (Mg и Fe) в различных концентрациях и сочетаниях на фотоферментативное выделение водорода (H_2) пурпурной бактерией *Rhodobacter sphaeroides* MDC6522. Железо и магний относятся к микроэлементам, необходимым для роста и метаболизма пурпурных бактерий. Комбинированное действие 5 мМ Mg(II) и 80 мкМ Fe(II) повышало рост бактерии в 1.5 раза по сравнению с контрольным образцом. При этом, выход H_2 в *Rh. sphaeroides* возрастал в 2.3 раза, вероятно, за счет активации соответствующего фермента – нитрогеназы. Для определения роли протонной АТФазы в этом процессе было исследовано комбинированное действие данных ионов на АТФазную активность мембранных везикул *Rh. sphaeroides*. В присутствии 5 мМ Mg(II) и 80 мкМ Fe(II) АТФазная активность возрастала на 67 %, свидетельствуя о взаимосвязи между выходом H_2 и АТФазной активностью. Таким образом, комбинирование ионов железа и магния способствует фотовыделению H_2 *Rh. sphaeroides*. Полученные результаты важны для выявления регуляторных путей метаболизма H_2 в пурпурных бактериях.

Ионы металлов – фотовыделение водорода – параметры роста –
Rhodobacter sphaeroides

Ուսումնասիրվել է մետաղների (Mg և Fe) իոնների տարբեր կոնցենտրացիաների համակցված ազդեցությունը *Rhodobacter sphaeroides* MDC6522 ծիրանագույն բակտերիաներում ֆոտոֆերմենտատիվ ջրածնի (H_2) արտադրության վրա: Երկաթը և մագնեզիումը միկրոտարրեր են, որոնք անհրաժեշտ են ծիրանագույն բակտերիաների աճի և կյանքափոխանակության համար: 5 մՄ Mg(II) և 80 մկՄ Fe(II) համակցումը խթանում էր բակտերիայի աճման արագությունը 1.5 անգամ ստուգիչի համեմատությամբ: Ավելին, H_2 -ի ելքը *Rh. sphaeroides*-ում աճել է 2.3 անգամ, ինչը կարող է պայմանավորված լինել համապատասխան ֆերմենտի՝ նիտրոգենազի ակտիվացման հետ: Այս գործընթացում պրոտոնային ԱԵՖազի դերի պարզաբանման համար ուսումնասիրվել է տվյալ իոնների համակցված ազդեցությունը *Rh. sphaeroides*-ի թաղանթային բշտիկների ԱԵՖազային ակտիվության վրա: 5 մՄ Mg(II) և 80 մկՄ Fe(II) առկայությամբ ԱԵՖազային ակտիվությունը աճել է 67 %-ով, վկայելով H_2 -ի ելքի և ԱԵՖազային ակտիվության փոխկապակցվածության մասին: Այսպիսով, երկաթի և մագնեզիումի իոնների համակցումը խթանում է *Rh. sphaeroides*-ում H_2 -ի ֆոտոարտադրությունը: Ստացված տվյալները կարևոր են ծիրանագույն բակտերիաներում H_2 -ի կյանքափոխանակության կարգավորման ուղիների պարզաբանման համար:

Մետաղների իոններ – ջրածնի ֆոտոարտադրություն – աճման չափանիշներ –
Rhodobacter sphaeroides

The effect of metal (Mg and Fe) ions in different concentrations and combinations on photo-fermentative H_2 production by purple bacteria *Rhodobacter sphaeroides* MDC6522 has been determined. Iron and magnesium are microelements, which are necessary for the growth and metabolism of purple bacteria. The simultaneous addition of 5 mM Mg(II) and 80 μ M Fe(II)

enhanced bacterial growth rate by ~1.5-fold, in comparison to control sample. Moreover, the H₂ yield in *Rh. sphaeroides* was enhanced by ~2.3-fold, which can be connected with activation of the corresponding enzyme, nitrogenase. For revealing the role of proton ATPase the effect of these metal ions combination on ATPase activity of *Rh. sphaeroides* membrane vesicles has been studied. In the presence of 5 mM Mg(II) and 80 μM Fe(II) stimulation of ATPase activity by 67 % was observed, testifying a relationship between the yield of H₂ and ATPase activity. Thus, the combination of iron and magnesium ions stimulates the H₂ photoproduction by *Rh. sphaeroides*. The obtained results are significant for revealing the regulatory pathways of H₂ metabolism in purple bacteria.

Metal ions – hydrogen photoproduction – growth properties – Rhodobacter sphaeroides

Молекулярный водород (H₂) является перспективным источником экологически чистой энергии и может сыграть важную роль в энерготехнологиях будущего. Первые работы о биологическом выделении молекулярного водорода (H₂) посвящены пурпурным бактериям, представители которых способны выделять H₂ в фотогетеротрофных условиях, а также при азотфиксации [1,2,10,14]. Впервые Гест и Камен описали процесс светозависимого выделения H₂ пурпурной бактерией *Rhodospirillum rubrum*, получивший название “фотовыделения водорода” [1]. В процессе бескислородного фотосинтеза, осуществляемого пурпурными бактериями, различные органические кислоты (янтарная, яблочная и др.) могут расщепляться до протонов, CO₂ и H₂ [2,5,14]. После поглощения кванта света светособирающим комплексом энергия возбуждения достигает реакционного центра и электрон переносится к убихинону и комплексу цитохром *bc*₁. Циклический перенос электрона завершается восстановлением фотоокисленного РЦ цитохромом *c*₂ и генерацией протонного градиента, который используется для переноса электронов к ферредоксину, а также для синтеза АТФ протонной АТФазой. Затем ферредоксин и АТФ участвуют в производстве H₂ при участии нитрогеназы. Это так называемый “фотоферментативный” путь выделения водорода [5,10,14].

Ионы металлов, таких как железо (Fe), магний (Mg), молибден (Mo) и другие, необходимы для роста и метаболизма большинства микроорганизмов [3, 4, 7, 13, 15]. Fe и Mg являются компонентами питательной среды пурпурных бактерий [3, 6, 8, 9]. Fe входит в состав ферментов, участвующих в метаболизме H₂ в пурпурных бактериях, нитрогеназы и мембраносвязанной гидрогеназы, а также в состав переносчиков фотосинтетической электронтранспортной цепи – ферредоксина и цитохромов [2, 3, 8, 9]. Ион магния является активатором разных ферментов, а также входит в состав клеточных стенок, плазматических мембран и фотосинтетических пигментов – хлорофиллов и бактериохлорофиллов [6,9].

В ряде работ исследовано действие ионов разных металлов на параметры роста и жизнедеятельность различных бактерий [7-9,14]. Трчуняном и соавторами [12] показано стимулирующее действие ионов разных металлов и их сочетаний на процессы темнового выделения H₂ *Escherichia coli*. Однако данные о комбинированном действии ионов металлов на фотоферментативное выделение H₂ отсутствуют.

Целью настоящей работы является изучение влияния Mg(II) и Fe(II) в различных концентрациях и сочетаниях на фотоферментативное выделение H₂ *Rhodobacter sphaeroides* MDC6522, выделенной из минеральных источников Армении. Данное исследование поможет найти оптимальные комбинации ионов железа и магния для увеличения эффективности производства H₂. Полученные результаты важны для выявления регуляторных путей метаболизма H₂ в пурпурных бактериях.

Материал и методика. В работе использовалась пурпурная несерная бактерия *Rh. sphaeroides*, шт. MDC6522 (Центр депонирования микроорганизмов НАН Армении, Ереван, Армения, WDCM803). *Rh. sphaeroides* выращивались в анаэробных условиях на питательной среде Ормерода, содержащей сукцинат (30 мМ) в качестве источника углерода и дрожжевый экстракт (2 г/л) в качестве источника азота и витаминов, в термостате типа ТПС-3 при pH 7.5±0.2, температуре 30±0.2 °C и освещении 2000 люкс [4,5]. Удельную скорость роста (μ) определяли как частное от деления $0.693 (\ln 2)$ на время удвоения ОП в интервале, когда изменение ОП во времени носило линейный характер: $\mu = 0.693/\tau$, где τ – время удвоения ОП суспензии бактерий [4,5]. Для освещения использовали галогеновые лампы (мощность – 60 Вт). Интенсивность света измеряли люксметром LM37 (Carl Roth, Germany). Рост *Rh. sphaeroides* контролировали путем измерения оптической плотности (ОП) суспензии на спектрофотометре Spectro UV-Vis Auto (Labomed, США) при длине волны 660 [4,5]. Ионы металлов добавляли непосредственно в питательную среду в виде солей ($\text{FeSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$ и $\text{MgSO}_4 \cdot 7\text{H}_2\text{O}$): Mg(II) в концентрации 1, 5 и 10 мМ; Fe(II) – 40 и 80 мкМ.

Для определения величины окислительно-восстановительного потенциала (ОВП) использовали цифровые иономеры И-160 МП (Гомельский завод измерительных приборов, г. Гомель, Беларусь) с платиновым (ЭПВ-01) и титан-силикатным (ЭО-21) электродами, как описано ранее [4,5]. Выход H_2 рассчитывали по изменению величины ОВП и выражали в ммоль H_2 /л культуры [4,6]. АТФазную активность определяли по высвобождению неорганического фосфора ($\text{P}_\text{н}$) после реакции суспензии мембранных везикул с АТФ и выражали в количестве $\text{P}_\text{н}$, высвобождаемого в единицу времени на мг белка. Количество $\text{P}_\text{н}$ определяли колориметрически по методу Тауски и Шора [4, 5].

В работе использовали реактивы аналитической чистоты (Carl Roth GmbH, Германия, Sigma Aldrich, США). Приводятся средние данные из 3-5 независимых экспериментов со стандартной ошибкой [4].

Результаты и обсуждение. В данной работе исследовали комбинированное действие различных концентраций ионов Mg(II) и Fe(II) на параметры роста (оптическая плотность, удельная скорость роста и ОВП среды) пурпурной бактерии *Rh. sphaeroides* MDC6522. Fe(II) и Mg(II) являются компонентами питательной среды Ормерод пурпурных бактерий (в концентрации 1 мМ Mg(II) и 40 мкМ Fe(II)).

Все комбинации ионов стимулировали рост *Rh. sphaeroides*, что указывает на то, что Mg(II) и Fe(II) способствуют росту фототрофных бактерий (рис. 1А). Интересным является тот факт, что данный штамм *Rh. sphaeroides* не способен к росту в отсутствие ионов Mg(II) , подтверждая необходимость данного иона для фотосинтезирующих бактерий [6]. Как известно, магний входит в состав основного фотосинтетического пигмента пурпурных бактерий – бактериохлорофилла.

Также было исследовано действие ионов металлов на удельную скорость роста *Rh. sphaeroides*. В присутствии 80 мкМ Fe(II) и разных концентраций Mg(II) удельная скорость роста была выше, чем у контрольного образца (40 мкМ Fe(II) и 1 мМ Mg(II)) (рис. 1Б). Наиболее интенсивный рост наблюдался в присутствии 80 мкМ Fe(II) и 5 мМ Mg(II) : удельная скорость роста превышала скорость роста контроля в ~1.5 раза (рис. 1Б). В *E. coli* Fe(II) может переноситься неспецифической системой переноса магния *CorA* наряду с Mg(II) [11]. Наличие таких систем важно для бактерий, живущих в анаэробных условиях [11].

Как известно, в процессе фототрофного роста *Rh. sphaeroides* наблюдается синтез фотосинтетического аппарата, который представлен двумя светособирающими комплексами (B800-850 and B875), окружающими реакционный центр [12].

В состав светособирающих комплексов входят белки и фотосинтетические пигменты (бактериохлорофилл (Бхл) *a* и каротиноиды). Для исследования действия ионов металлов на формирование фотосинтетического аппарата были получены спектры поглощения клеток *Rh. sphaeroides*, выращенных в присутствии Fe(II) и Mg(II) .

Как показано на рис. 2, во всех спектрах поглощения в диапазоне длин волн 400–1000 нм наблюдаются несколько максимумов, типичных для пурпурных бактерий [6,12].




Рис. 1. Изменение оптической плотности (А) и удельной скорости роста (Б) *Rh. sphaeroides* MDC6522 при комбинированном действии Fe(II) и Mg(II)

Эти максимумы указывают на наличие каротиноидов (450, 478 и 510 нм) и Бхл *a* (590, 800, 850 и 875 нм), соответственно.

Как показано на рис. 2, разные концентрации Fe(II) и Mg(II) влияют на формирование фотосинтетических пигментов *Rh. sphaeroides*. При добавлении 80 мкМ Fe(II) и 5 мМ Mg(II) наблюдается рост максимумов поглощения, типичных для каротиноидов, и уровня комплекса В800-850 (рис. 2). Известно, что комплекс В800-850 участвует в аккумуляции и передаче световой энергии реакционному центру.




Рис. 2. Спектры поглощения суспензии *Rh. sphaeroides* MDC6522, выращенной в анаэробных условиях при освещении в присутствии Fe(II) и Mg(II)

Окислительно-восстановительный потенциал (ОВП) среды – важный параметр, определяющий анаэробный рост бактерий [5,13,15]. ОВП суспензии *Rh. sphaeroides*, измеряемый платиновым электродом, постепенно снижался при наличии в среде ионов металлов. Падение ОВП было наиболее интенсивным (-725 ± 20 мВ) в присутствии 80 мкМ Fe(II) и 5 мМ Mg(II) (рис. 3А).

Падение ОВП указывает на повышение восстановительных процессов, связанных с формированием конечных продуктов брожения, а также может свидетельствовать о производстве H₂ [5, 13].




Рис. 3. Комбинированное действие Fe(II) и Mg(II) на ОВП среды и выход H_2 в *Rh. sphaeroides* MDC6522 в процессе анаэробного роста при освещении

Обнаружено, что выход H_2 в среде с 80 мкМ Fe(II) и 5 мМ Mg(II) в 2.3 раза превышает выход водорода в контрольном образце (40 мкМ Fe(II) и 1 мМ Mg(II)) (рис. 3Б). Выход H_2 в среде с 40 мкМ Fe(II) и 10 мМ Mg(II) совпал с выделением H_2 в контрольном образце (рис. 3Б). Увеличение выхода H_2 возможно за счет активации соответствующего фермента – нитрогеназы. Интересным является тот факт, что в отсутствие в среде Fe(II) выделения H_2 не происходило (не показано). Таким образом, увеличение концентрации ионов железа и магния и их комбинирование заметно повышают выход H_2 в *Rh. sphaeroides* в процессе анаэробного роста при освещении.

Для определения механизмов выделения H_2 и роли протонной F_0F_1 -АТФазы в этом процессе было исследовано комбинированное действие ионов Fe(II) и Mg(II) на N,N' -дициклогексилкарбодиимид (ДЦКД)-чувствительную АТФазную активность мембранных везикул *Rh. sphaeroides*. При добавлении 80 мкМ Fe(II) и 1-5 мМ Mg(II) АТФазная активность возрастала на 33 и 67 %, соответственно (рис. 4). Полученные данные свидетельствуют о взаимосвязи между выходом водорода и АТФазной активностью. Кроме того, отмеченные ионы металлов могут взаимодействовать непосредственно с протонной АТФазой, повышая выход H_2 .




Рис 4. АТФазная активность мембранных везикул *Rh. sphaeroides* при комбинированном действии Fe(II) и Mg(II)

Таким образом, полученные данные свидетельствуют о том, что Fe(II) и Mg(II) влияют на фототрофный рост бактерии *Rh. sphaeroides*. Комбинированное действие ионов металлов выражается в повышении выделения H_2 *Rh. Sphaeroides*. В отсутствие Fe(II) выделения H_2 не происходит, что подтверждает важную роль данного иона в производстве водорода. Более того, при комбинированном действии наблюдается рост максимумов поглощения, типичных для каротиноидов, и уровня светособирающих комплексов В800-850. Эти комплексы участвуют в аккумуляции и передаче световой энергии реакционному центру, тем самым повышая выход H_2 . Кроме того, данные ионы влияют на ДЦКД-чувствительную АТФазную активность мембранных везикул *Rh. sphaeroides*, свидетельствуя о взаимосвязи между выходом водорода и мембраносвязанной протонной АТФазой.

Пути повышения выхода H_2 пурпурными бактериями включают исследования новых аспектов в метаболизме водорода путем регулирования активности мембраносвязанных ферментов. Полученные данные помогут найти новые пути регуляции фотовыделения H_2 .

ЛИТЕРАТУРА

1. Кондратьева Е.Н., Гоготов И.Н. Молекулярный водород в метаболизме микроорганизмов. М., Наука, 344 с., 1981.
2. Цыганков А.А., Хуснутдинова А.Н. Участие H_2 в метаболизме пурпурных бактерий и перспективы практического использования. Микробиол., 84, 3-26, 2015.
3. E., Gündüz U., Yücel M., Eroglu I. Effect of iron and molybdenum addition on photofermentative hydrogen production from olive mill wastewater. Int. J. Hydrogen Energy, 36, 5895-5903, 2011.
4. Gabrielyan L., Hakobyan L., Trchounian A. Comparative effects of Ni(II) and Cu(II) ions and their combinations on redox potential and hydrogen photoproduction by *Rhodobacter sphaeroides*. J. Photochem. Photobiol., 164, 271-275, 2016.
5. Gabrielyan L., Sargsyan H., Trchounian A. Novel properties of photofermentative biohydrogen production by purple bacteria *Rhodobacter sphaeroides*: effects of protonophores and inhibitors of responsible enzymes. Microb. Cell Fact., 14, 131-140, 2015.
6. Hakobyan L., Gabrielyan L., Trchounian A. Ni (II) and Mg (II) ions as factors enhancing biohydrogen production by *Rhodobacter sphaeroides* from mineral springs. Int. J. Hydrogen Energy, 37, 7486-7491, 2012.
7. Gou Ch., Guo J., Lian J., Guo Y., Jiang Z., Yue L., Yang J. Characteristics and kinetics of biohydrogen production with Ni^{2+} using hydrogen-producing bacteria. Int. J. Hydrogen Energy, 40, 161-167, 2015.
8. Kars G., Gündüz U., Yücel M., Türker L., Eroglu I. Hydrogen production and transcriptional analysis of *nifD*, *nifK* and *hupS* genes in *Rhodobacter sphaeroides* O.U.001 grown in media with different concentrations of molybdenum and iron. Int. J. Hydrogen Energy, 31, 1536-1544, 2006.
9. Liu B.F., Ren N.Qi., Ding J., Xie G.J., Guo W.Q. The effect of Ni^{2+} , Fe^{2+} and Mg^{2+} concentration on photo-hydrogen production by *Rhodospseudomonas faecalis* RLD-53. Int. J. Hydrogen Energy, 34, 721-726, 2009.
10. Mishra P., Krishnan S., Rana S., Singh L., Sakinah M., Ab Wahid Z. Outlook of fermentative hydrogen production techniques: An overview of dark, photo and integrated dark-photo fermentative approach to biomass. Energy Strategy Rev., 24, 27-37, 2019.
11. Nies D.H. Microbial heavy-metal resistance. Appl. Microbiol. Biotechnol., 51, 730-750, 1999.
12. Tavano C.L., Donohue T.J. Development of the bacterial photosynthetic apparatus. Curr. Opin. Microbiol., 9, 625-631, 2006.

13. Trchounian K., Poladyan A., Trchounian A. Optimizing strategy for *Escherichia coli* growth and hydrogen production during glycerol fermentation in batch culture: Effect of some heavy metals and their mixture. *Appl. Energy*, 177, 335-340, 2016.
14. Trchounian K., Sawers R.G., Trchounian A. Improving biohydrogen productivity by microbial dark-and photo-fermentations: Novel data and future approaches. *Renew. Sust. Energ. Rev.* 80, 1201-1216, 2017.
15. Vardanyan Z., Trchounian A. Cu(II), Fe(III) and Mn(II) combinations as environmental stress factors have distinguishing effects on *Enterococcus hirae*. *J. Environ. Sci.*, 28, 95-100, 2015.

Поступила 24.12.2018



•Փորձարարական և տեսական հոդվածներ• Экспериментальные и теоретические статьи •
•Experimental and theoretical articles•

Հայաստանի կենսաբ. հանդես, 1 (71), 2019

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՐՏԻ ՌԻԹՄԻ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՕՐԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՈՄԱՇՏԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Է.Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Ծ.Ի. ԱՂԱՄՅԱՆ, Ս.Մ. ՄԻՆԱՍՅԱՆ, Լ.Է. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԵՊՀ, Տ. Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
emma.gevorkyan@ysu.am

Ուսումնական ծանրաբեռնվածության ընթացքում և նարդոսի եթերայուղով արոմաշտկման պայմաններում ուսումնասիրվել են ուսանողների սրտի ռիթմի կարգավորիչ մեխանիզմների ակտիվությունը բնորոշող ցուցանիշների փոփոխությունները: Ուսումնական գործընթացի մեջ օրգանիզմի գործառական համակարգերի ներգրավման ընթացքում նարդոսի եթերայուղի կիրառումն առողջ ուսանողների սրտի ռիթմի ցուցանիշների վրա թողնում է էական շտկող ազդեցություն, պահպանելով սիմպաթիկ նյարդային համակարգը գերլարվածությունից:

Սրտի ռիթմ-ուսումնական ծանրաբեռնվածություն-եթերայուղ-նարդոս

В процессе учебной нагрузки и при ароматкоррекции эфирным маслом лаванды изучены сдвиги показателей активности регуляторных механизмов ритма сердца студентов. Показано, что использование масла лаванды в период вовлечения функциональных систем организма в процесс обучения защищает симпатическую нервную систему от перенапряжения, оказывая тем самым корректирующее влияние на показатели ритма сердца здоровых студентов.

Ритм сердца – учебная нагрузка – эфирное масло – лаванда

The alterations in the activity indicators of the regulatory mechanisms of the heart rhythm of students have been studied during the cognitive load and under aromatic correction by essential oil of lavender. It is shown that the use of lavender oil during the period of involvement of the body's functional systems in the learning process protects the sympathetic nervous system from overexertion, thus providing a corrective effect on the heart rate indicators of healthy students.

heart rhythm – cognitive load – essential oil – lavender

Վերջին տարիներին ուսանողների շրջանում դիտվում է տարատեսակ հոգեմարմնական հիվանդությունների զգալի աճ: Սովորողների հոգեֆիզիոլոգիական վիճակի վրա անդրադառնում են տարատեսակ գործոններ՝ առողջական վիճակը, տարիքը, սեռը, աշխատունակությունը, օրվա ռեժիմը և այլն: Ուսանողների համար լուրջ փորձություն է հանդիսանում նաև տեղեկատվական գերբեռնվածությունը, որը հաճախ հանգեցնում է ժամանակի պակասի և որպես հետևանք՝ զարգացող հոգնածությամբ պայմանավորված աշխատունակության անկման [5, 6, 9, 11]: Ուսումնական օրվա ընթացքում աշխատունակության գործընթացը բնութագրվում է երեք փուլերով՝ ներգրավում, կայունացում և անկում: Շաբաթական ուսումնական գործընթացում մտավոր աշխատունակությունը բնութագրվում է գործառական համակարգերի ներգրավմամբ՝ ուսումնական օրվա և շաբաթվա սկզբում և հոգնածության զարգացմամբ՝ վերջում [1, 3]:

Ուսումնական ծանրաբեռնվածության բացասական ազդեցությունը շտկելու նպատակով կիրառվում են մի շարք ոչ դեղորայքային եղանակներ: Հոտավետ նյութերի կարգավորիչ ազդեցությունը պայմանավորված է օրգանիզմի հարմարողական և գործառնական հնարավորությունների կենտրոնացման հետ: Մեր նպատակն է եղել ուսումնասիրել ուսանողների սրտի ռիթմի կարգավորիչ մեխանիզմների ակտիվությունը բնորոշող ցուցանիշների փոփոխությունները օրական ուսումնական ծանրաբեռնվածության ընթացքում և նարդոսի եթերայուղով արոմաշտկման պայմաններում: Նարդոսը իջեցնում է արյան շիճուկի մեջ կորտիզոլի քանակը և բարելավում արյան հոսքը [12, 14], ունի հանգստացնող ազդեցություն և կարող է դրական անդադառնալ օրգանիզմի մի շարք գործառնությունների վրա:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են ԵՊՀ-ի կենսաբանության ֆակուլտետների 18-19 տարեկան 20 կամավոր ուսանողների վրա: Բոլոր հետազոտվողները եղել են առողջ, սակայն դասերից առաջ ունեցել են որոշ հոգեմարմնական բողոքներ՝ տագնապայնություն, անհանգստություն, լարվածություն և այլն: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով՝ առաջին դասից առաջ, առաջին դասից հետո, վերջին դասից հետո: Հետազոտությունները իրականացվել են նույն ուսանողների վրա երկու տարբերակով: Առաջին տարբերակում ցուցանիշները գրանցվել են առանց որևէ ներգործության և համարվել են ստուգիչ: Երկրորդ տարբերակում իրականացվել է արոմաշտկում՝ ուսանողները լսարանում առաջին դասի ընթացքում սառը ինհալացիայի միջոցով ենթարկվել են նարդոսի եթերայուղի ազդեցությանը: Օգտագործվել է նարդոսի մաքուր եթերայուղ (արտադրող՝ ԲԲԸ «Բնական յուղեր», TY 9158-004-08628011-00): Ուսումնասիրությունները իրականացվել են երկուշաբթի օրերին: Սիրտ-անոթային համակարգի գործառնական հնարավորությունների գնահատման համար իրականացվել է ԷՍԳ-ի գրանցում և վերլուծություն Բանասկու վարիացիոն պոլսագրաֆիան եղանակով: Այդ նպատակով կիրառվել է ծրագրային համալիր, որն իր մեջ միավորում է «Bio-Arm 001» մոդելի շարժական էլեկտրոսրտագրիչ և համակարգիչ՝ օժտված ԷՍԳ-ի ավտոմատ գրանցման և սրտի ռիթմի վարիացիոն պոլսագրաֆիան վերլուծության ծրագրերով: Յուրաքանչյուր հետազոտական իրավիճակում ամեն հետազոտվողի համար վերլուծվել են ԷՍԳ-ի երեքական 5 րոպեանոց հատվածներ: ԷՍԳ-ի ուսումնասիրության և վերլուծության ծրագրերը կազմվել են Սրտաբանության Եվրոպական ասոցիացիայի և էլեկտրոֆիզիոլոգիայի և առիթմոլոգիայի Հյուսիս-Ամերիկյան ասոցիացիայի չափանիշների համաձայն:

Ուսումնասիրվել են հետևյալ ցուցանիշները՝ pNN50 (%) – միմյանցից ավելի քան 50 մվ-ով տարբերվող իրար հաջորդող նորմալ R–R ինտերվալների (N–N ինտերվալներ) տոկոսը, արտացոլում է պարասիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվությանը; RMSSD (մվ) – արտացոլում է պարասիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցությունը սրտի ռիթմի վրա և շնչառական սինուսային առիթմիան; հիստոգրաֆիկ՝ Mo (վ) – մոդա, կարդիոինտերվալների առավել հաճախ հանդիպող մեծությունը; AMo (%) – մոդայի տատանասահման, մոդայի հանդիպման հաճախությունը տոկոսով; Δx(վ) – վարիացիոն թափ, կարդիոինտերվալների մաքսիմալ և մինիմալ նշանակությունների միջև տարբերությունը; ինտեգրալային L3 – լարվածության ցուցիչ, արտացոլում է սրտի ռիթմի կարգավորման կենտրոնացման աստիճանը; V3S – վեգետատիվ հավասարակշռության ցուցիչ; ԿԳԱՑ – կարգավորող գործընթացների աղեկավարության ցուցիչ; Ռ-ՎՑ – ռիթմի վեգետատիվ ցուցիչ; սպեկտրալ՝ HF (մվ² կամ %) – սպեկտրի հզորությունը բարձր հաճախության տիրույթում (0,15-0,4 Հց); LF (մվ² կամ %) – սպեկտրի հզորությունը ցածր հաճախության տիրույթում (0,04-0,15 Հց); VLF (մվ² կամ %) – սպեկտրի հզորությունը շատ ցածր տիրույթում (0,003-0,04 Հց); TP (մվ²) – սպեկտրի ընդհանուր հզորություն, բնութագրում է սրտի ռիթմի տատանողականության աստիճանը, պարասիմպաթիկ օղակի ակտիվացումը հանգեցնում է TP-ի արժեքի մեծացմանը, իսկ սիմպաթիկ նյարդային համակարգի ազդեցության դեպքում դիտվում է հակառակ արդյունք: LF/HF – սիմպաթո-պարասիմպաթիկ հավասարակշռության ցուցիչ:

Հաշվարկվել են նաև՝ SD1, SD2 – սպեկտրագրերում ավտոռեգրեսիոն ամպի չափերը; ԿՀԱՑ – կարգավորող համակարգերի ակտիվության ցուցիչը:

Ուսանողների հոգեմարմնական վիճակը գնահատվել են անհատական հարցման եղանակով: Ստաված տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է «Biostat» ծրագրով, ըստ Ստյուդենտի t չափանիշ:

Արդյունքներ և քննարկում: Հետազոտություններից առաջ հետազոտվողները ունեցել են հուզական լարվածության բարձր ցուցանիշներ: Ստուգիչ խմբում հետազոտությունների ընթացքում սրտի ռիթմի տատանողականության բնութագրերի դինամիկայի վերլուծությունը ցույց է տվել, որ մեկժամյա ուսումնական ծանրաբեռնվածությունից հետո (ներգրավման շրջան) ուսանողների մեծ մասի մոտ նկատվում է սրտի ռիթմի կարգավորիչ մեխանիզմների լարվածություն, ինչը դրսևորվել է վեգետատիվ կարգավորման գործընթացում հավասարակշռության շեղմամբ դեպի սիմպաթիկ ակտիվության գերակայություն, որի վկայությունն է հանդիսանում առաջին

դասից հետո դիտվող ՍԿՀ-ի ($90,3 \pm 3,1$ գ/ր ($p < 0,01$), աճը նորմալի համեմատ՝ 9,7%), ինչպես նաև LՑ-ի որոշակի բարձր մակարդակը ($216,2 \pm 42,4$ պ.մ. ($p < 0,001$), աճը նորմալի համեմատ՝ 19,6%):

Կարգավորման սիմպաթիկ մեխանիզմների լարվածության օգտին են վկայում նաև սիմպաթիկ կոնտուրի ակտիվությունը բնութագրող այլ մարկերների՝ ԿԳԱՑ-ի, ՎՅՑ-ի, ՌՎՑ-ի և AMo-ի աճը այդ շրջանում 12,1%-ով ($p < 0,001$), 23,3%-ով ($p < 0,001$), 32,1%-ով ($p < 0,001$) և 10,8%-ով ($p < 0,01$) համապատասխանաբար (աղ. 1): Ուսումնական գործնականի ներգրավման շրջանում մեխանիզմների լարվածության արդյունք է հանդիսանում նաև ԿՅԱՑ-ի տեղաշարժը հարմարման տիրույթից դեպի գործառական համակարգերի լարվածության տիրույթ:

Աղյուսակ 1. Ուսանողների սրտի ռիթմի ցուցանիշների փոփոխությունները ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում

Ցուցանիշներ	Ստուգիչ խումբ			Փորձնական խումբ		
	Դասերից առաջ (նորմալ)	Առաջին դասից հետո	Վեցերորդ դասից հետո	Դասերից առաջ (նորմալ)	Առաջին դասից հետո	Վեցերորդ դասից հետո
ՍԿՀ (գ/ր)	$82,3 \pm 2,8$	$90,3 \pm 3,1$	$76,1 \pm 2,20^{**}$	$82,60 \pm 2,40$	$84,5 \pm 4,10$	$80,30 \pm 3,20^*$
LՑ (պ.մ.)	$180,7 \pm 31,4$	$216,2 \pm 42,4$	$135,2 \pm 28,1^{***}$	$181,3 \pm 42,6$	$204,3 \pm 38,2$	$156,70 \pm 24,6^{***}$
AMo (%)	$72,3 \pm 11,2$	$80,1 \pm 5,2$	$62,0 \pm 3,10^{**}$	$72,6 \pm 3,80$	$78,10 \pm 3,20$	$70,4 \pm 2,80^{**}$
Mo (վ)	$0,72 \pm 0,02$	$0,70 \pm 0,03$	$0,78 \pm 0,02^*$	$0,72 \pm 0,11$	$0,71 \pm 0,02$	$0,75 \pm 0,02^*$
Δx (վ)	$0,28 \pm 0,03$	$0,27 \pm 0,01$	$0,32 \pm 0,01^{**}$	$0,28 \pm 0,02$	$0,26 \pm 0,01$	$0,30 \pm 0,01^{**}$
ԿԳԱՑ (պ.մ.)	$100,4 \pm 6,8$	$112,5 \pm 7,1$	$79,31 \pm 3,90^{***}$	$100,8 \pm 5,90$	$108,1 \pm 2,40$	$94,0 \pm 2,80^{***}$
ՎՅՑ (պ.մ.)	$258,2 \pm 24,3$	$318,4 \pm 32,3$	$197,1 \pm 19,1^{***}$	$260,4 \pm 26,2$	$300,4 \pm 28,30$	$235,60 \pm 19,8^{**}$
ՌՎՑ (պ.մ.)	$5,24 \pm 0,50$	$6,92 \pm 0,40$	$4,12 \pm 0,90^{***}$	$5,28 \pm 0,40$	$5,80 \pm 0,20$	$4,28 \pm 0,30^{***}$
ԿՅԱՑ (պ.մ.)	$2,4 \pm 0,10$	$5,3 \pm 0,20$	$3,30 \pm 0,20^{***}$	$2,40 \pm 0,10$	$4,20 \pm 0,20$	$3,00 \pm 0,1^{***}$
TP (մվ ²)	$2100,6 \pm 148,3$	$1828,8 \pm 192,9$	$2680,0 \pm 161,2^{**}$	$2126,2 \pm 151,3$	$1980,8 \pm 182,4$	$2384,6 \pm 102,2^{**}$
LF (%)	$55,4 \pm 2,3$	$62,0 \pm 3,1$	$46,6 \pm 2,1$	$55,60 \pm 3,0$	$58,2 \pm 2,4$	$50,40 \pm 2,5$
HF (%)	$32,3 \pm 1,9$	$25,4 \pm 2,0$	$42,5 \pm 2,4$	$31,9 \pm 1,8$	$28,1 \pm 1,1$	$39,20 \pm 2,4$
VLF (%)	$12,4 \pm 0,5$	$13,3 \pm 0,8$	$11,2 \pm 0,6$	$12,5 \pm 0,5$	$12,9 \pm 0,8$	$10,50 \pm 0,6$
LF/HF	$1,70 \pm 0,02$	$2,4 \pm 0,02$	$1,20 \pm 0,01^{**}$	$1,70 \pm 0,02$	$2,1 \pm 0,01$	$1,30 \pm 0,01^{***}$
SD ₁	$40,2 \pm 1,9$	$30,4 \pm 2,3$	$46,0 \pm 2,80$	$38,6 \pm 1,80$	$34,2 \pm 1,4$	$40,6 \pm 2,0$
SD ₂	$70,5 \pm 2,2$	$60,7 \pm 3,10$	$85,8 \pm 4,80$	$69,9 \pm 2,30$	$65,3 \pm 2,1$	$76,10 \pm 3,20$
RMSSD (մվ)	$32,4 \pm 2,1$	$26,8 \pm 1,82$	$40,90 \pm 2,40^{***}$	$33,70 \pm 2,2$	$29,6 \pm 2,4$	$36,80 \pm 1,80^{***}$
pNN50 (%)	$14,3 \pm 1,4$	$12,5 \pm 1,91$	$17,90 \pm 2,60^{***}$	$14,5 \pm 1,20$	$13,1 \pm 1,3$	$15,6 \pm 1,10^{**}$

Ծանոթություն՝ * $p < 0,05$; ** $p < 0,01$; *** $p < 0,001$

Վերջիններս ուղեկցվել են ՎՆՀ հումորալ և պարասիմպատիկ մեխանիզմների ակտիվությունը արտացոլող հիստոգրաֆիկ ցուցանիշների մակարդակների՝ Mo-ին Δx-ի աննշան նվազմամբ համապատասխանաբար 2,8% և 3,6%: Սրտի ռիթմի ուսումնասիրման ստատիստիկ ցուցանիշների վերլուծությունը ևս ցույց է տվել պարասիմպատիկ մեխանիզմների ակտիվությունը բնութագրող՝ RMSSD և pNN50 ցուցիչների իջեցում նախնական մակարդակների համեմատ համապատասխանաբար 17,3%-ով ($p < 0,001$) և 12,6%-ով ($p < 0,01$): RMSSD և pNN50 ցուցիչների փոքրացումը վկայում է սրտի ռիթմի կարգավորման ինքնավար կոնտուրի պարասիմպաթիկ օղակի ակտիվության նվազման մասին: Սրտի ռիթմի կարգավորման սպեկտրալ ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ մեկժամյա ուսումնական ծանրաբեռնվածությունից հետո (ներգրավման շրջան) հետազոտվողների մոտ դիտվող լարվածությունը արտացոլվել է նաև վերջիններս դինամիկայում: Նկատվել է TP-ի՝ սրտի ռիթմի գումարային սպեկտրի հզորության հավաստի նվազում 13,0%-ով ($p < 0,01$): Սպեկտրի ընդհանուր կառուցվածքում դիտվել է ցածր (LF) և շատ ցածր (VLF) հաճախականության ալիքների սպեկտրի հավաստի աճ 11,9%-ով և 7,3%-ով ($p < 0,05$): Վերջինս վկայում է, որ տվյալ պարագայում սրտի ռիթմի կարգավորումը պայմանավորված է նաև այլ՝ վեգետատիվ կարգավորման պարասիմպաթիկ օղակի թուլացմամբ, ինչն էլ ապահովում է վեգետատիվ հավասարակշռության տեղաշարժ սիմպատոտոնիայի ուղղությամբ: Սրա ապացույցն է հանդիսանում ընդհանուր սպեկտրում բարձր հաճախությամբ (HF) բաղադրիչի սպեկտրի փոքրացումը 21,4%-ով ($p < 0,001$), ինչպես նաև վեգետատիվ փոխհարաբերության ցուցիչ՝ LF/HF-ի աճը 41,2%-ով ($p < 0,001$):

Սիմպաթիկ մեխանիզմների ակտիվության բարձրացման օգտին է վկայում նաև ներգրավման շրջանում ստուգիչ խմբի հետազոտվողների մոտ դիտվող ավտո-ռեգրեսային ամպի դիսպերսիայի փոքրացումը՝ (SD_1 -ի, SD_2 -ի):

Ուսումնական դասընթացին ներգրավման շրջանում փորձնական խմբի հետազոտվողների ուսումնասիրված ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ վերջիններս ստուգիչի հետ կրել են միաուղղված բնույթ, սակայն ստուգիչ խմբի ուսանողների նույն ցուցանիշների համեմատությամբ փոփոխություններն եղել են ավելի թույլ արտահայտված: Ինտեգրալային և հիստոգրաֆիկ ցուցանիշների վերլուծության արդյունքում պարզվել է, որ ԼՑ-ի աճը նորմայի համեմատ կազմել է 12,7% ($p < 0,001$), իսկ ՍԿՅ-ի աճը՝ ընդամենը 2,3% (ստուգիչ խմբում՝ 19,6% և 9,7% համապատասխանաբար): Սիմպաթիկ կոնտուրի ակտիվությունը բնութագրող այլ մարկերների՝ ԿԳԱՑ-ի, ՎՅՑ-ի, ՌՎՑ-ի, AMo-ի աճը փորձնական խմբում կազմել է ընդամենը 7,2% ($p < 0,001$), 15,4% ($p < 0,001$), 9,8% ($p < 0,001$), 7,6% ($p < 0,01$) համապատասխանաբար (աղ. 1): Վերջինս ուղեկցվել է ՎՆՅ հումորալ մեխանիզմների ակտիվությունը արտացոլող հիստոգրաֆիկ ցուցանիշի՝ Mo-ի մակարդակի աննշան նվազմամբ (1,3%) և պարասիմպաթիկ ակտիվության ցուցիչ՝ Δx-ի փոքրացմամբ 7,2%-ով ($p < 0,01$): Սրտի ռիթմի ստատիստիկ ցուցիչների՝ RMSSD և pNN50 ցուցիչների ուսումնասիրումը փորձնական խմբում բացահայտել է իջեցում նախնական մակարդակների համեմատ, համապատասխանաբար 12,2%-ով ($p < 0,001$) և 9,7%-ով ($p < 0,01$): RMSSD, pNN50 ցուցիչների և Δx-ի փոքրացումը վկայում են սրտի ռիթմի կարգավորման ինքնավար կոնտուրի պարասիմպաթիկ օղակի ակտիվության նվազման մասին: Ինչ վերաբերվում է սպեկտրալ ցուցանիշներին, ապա ընդհանուր սպեկտրի TP-ի հզորությունը նվազել է ընդհամենը 7,0%-ով ($p < 0,01$): Սպեկտրի ընդհանուր կառուցվածքում նկատվել է ցածր (LF), շատ ցածր (VLF) և բարձր (HF) հաճախականության ալիքների սպեկտրի ավելի թույլ արտահայտված շարժեր, քան ստուգիչ խմբում: ԼՑ-ի, AMo-ի, TP-ի դիտվող փոփոխությունները վկայում են, որ փորձնական խմբում ուսումնական գործընթացին ներգրավումը իրականանում է սիմպատիկ մեխանիզմների ավելի թույլ արտահայտված լարվածության հաշվին, քան ստուգիչում, ինչը կարող է պայմանավորված լինել նարդոսի էթերայուղի շտկող ազդեցությամբ, ուղղված սիմպաթիկ նյարդային համակարգի պահպանմանը գերլարվածությունից: Վերջինիս մասին է վկայում նաև սիմպաթո-պարասիմպաթիկ փոխհարաբերությունների գործակցի՝ LF/HF-ի համեմատաբար կայուն մակարդակը:

Դասերի ավարտից հետո հետազոտությունների երկու տարբերակում էլ դիտվել է սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվությունը բնութագրող բոլոր ցուցանիշների մակարդակների նվազում: Ստուգիչ խմբում տեղի է ունեցել ԼՑ-ի, ՍԿՅ-ի և սիմպատիկ նյարդային համակարգի ակտիվությունը արտացոլող մարկերների՝ ԿԳԱՑ-ի, ՎՅՑ-ի, ՌՎՑ-ի, AMo-ի արժեքների նվազում նորմայի համեմատ 25,2%-ով ($p < 0,001$), 7,5%-ով ($p < 0,01$), 20,0%-ով ($p < 0,001$), 23,7%-ով ($p < 0,001$), 21,4%-ով ($p < 0,001$), 14,2%-ով ($p < 0,01$) համապատասխանաբար: Փորձնական խմբի հետազոտվողների մոտ այդ փոփոխությունները եղել են ավելի թույլ արտահայտված: Վերջինս ուղեկցվել է հումորալ և պարասիմպաթիկ կարգավորող մեխանիզմների ակտիվությունը արտացոլող Mo-ի, Δx-ի, RMSSD, pNN50 ցուցիչների աճով նորմայում դիտված մակարդակների համեմատ ստուգիչ խմբում՝ 8,3% ($p < 0,05$), 14,3% ($p < 0,01$), 26,2% ($p < 0,001$), 25,2% ($p < 0,001$) փորձնականում՝ 4,2% ($p < 0,05$), 7,1% ($p < 0,01$), 9,1% ($p < 0,001$), 7,6% ($p < 0,01$): Պարասիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվության բարձրացման օգտին են վկայում նաև դասերի ավարտին դիտվող սպեկտրային ցուցանիշների փոփոխությունները՝ TP-ի ու բարձր (HF) հաճախականությամբ ալիքների սպեկտրի արտահայտված աճը և ցածր (LF) ու շատ ցածր (VLF) հաճախականությամբ ալիքների սպեկտրի և սիմպաթո-պարասիմպաթիկ փոխհարաբերությունների գործակցի՝ LF/HF-ի փոքրացումը: Ինչպես երևում է ստացված տվյալներից, դասերի ավարտին ստուգիչ խմբում փորձնականի համեմատ դիտվում է սիմպաթիկ մեխանիզմների ակտիվության կրկնակի ավելի արտահայտված նվազում և պարասիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվությունը արտացոլող ցուցանիշների աճ:

Գրական տվյալների համաձայն օրգանիզմի հարմարումը ուսումնական ծանրաբեռնվածությանը իրականանում է ՎՆՅ-ի սիմպատիկ մեխանիզմների ակտիվացման հաշվին: Օրվա վերջում մեր կողմից դիտվող փոփոխությունները վկայում են ստուգիչ խմբի հետազոտվողների մոտ զարգացող հոգնածության մասին, որն բազմակի կրկնվելուց կարող է դառնալ գերհոգնածության պատճառ [2, 6, 7, 10]: Փորձնական խմբում դիտվող սիմպաթիկ և պարասիմպաթիկ մեխանիզմների ակտիվության ցուցանիշների ավելի մեղմ փոփոխությունները պայմանավորված են նարդոսի յուղի շտկող ազդեցությամբ և ուղղված են կանխարգելելու հոգնածության զարգացումը օրգանիզմում, նպաստելով ուսումնական գործընթացին ավելի հեշտ հարմարմանը:

Մեր կողմից ստացված արդյունքները համահունչ են մի շարք հեղինակների տվյալներին: Միջին դպրոցի ուսուցիչների մոտ ուսումնական ծանրաբեռնվածությունից հետո բերգամոնտի հոտի ազդեցությամբ նկատվում է զարկերակային ճնշման բաղադրիչների և ՍԿՅ-ի նվազում, բարձր (HF) հաճախականությամբ բաղադրիչի հզորության մեծացում, ցածր (LF) հաճախականությամբ բաղադրիչի հզորության նորմալացում, ինչը վկայում է վեգետատիվ գործառույթների կարգավորման սիմպաթիկ ազդեցությունների նվազման, պարասիմպաթիկ ուժեղացման և հոգեհուզական լարվածության աստիճանի թուլացման մասին: Սրտի ռիթմի կարգավորման նմանատիպ փոփոխություններ բացահայտվել են նաև այլ հեղինակների կողմից նարդոսի հոտի ներշնչման ժամանակ [8, 12, 13]: Եթերայուղը լավացնում է միոկարդի հաղորդելիության գործընթացները, հատկապես տարբեր բնույթի ծանրաբեռնվածությունների պայմաններում: Արոմաթերապիան դրական է ազդում նաև ԵՍԳ-ի ցուցանիշների վրա [4, 8]: Այնուամենայնիվ, արոմաթերապիայի ազդման մեխանիզմը մինչև այժմ վերջնականապես պարզ չէ: Հոտավետ յուղերի շտկող ազդեցությունը օրգանիզմի գործառական վիճակի վրա կարող է պայմանավորված լինել նրանով, որ հոտերի ընկալման և հոտառական տեղեկատվության մշակման մեջ մեծ դեր են կատարում գլխուղեղի ամենակարևոր հատվածներից որոշները՝ ճակատային կեղևը, հիպոթալամուսը, նշահամալիրը և այլն, որտեղ տեղակայված են նաև օրգանիզմի բարձրագույն վեգետատիվ կենտրոնները: Համաձայն Նիկոլանսկու տվյալներին [8]՝ հոտավետ միջոցներով հոտառական սենսոր համակարգի գրգռումը կարող է ուղեկցվել ՎՆՅ-ի մեղիատորային կատեխոլամին-, սերոտոնին-, Էնդորֆիներգիական օղակների ակտիվության փոփոխմամբ: Հոտավետ նյութերի մոլեկուլները ներծծվում են քթի լորձաթաղանթի մազանոթների, իսկ այնտեղից ընդհանուր արյան մեջ: Ն.Ս. Սեչենովի անվան Նյարդաբանական հիվանդանոցի գիտահետազոտական ինստիտուտի աշխատողների հետազոտությունները ցույց են տվել, որ նարդոսի և կիտրոնի եթերայուղերը բարձրացնում են ՎՆՅ-ի ակտիվությունը, հանգեցնում հիշողության ամրապնդմանը, կողմնորոշման ժամանակի նվազեցմանը [12]:

Այսպիսով, նարդոսի եթերայուղի կանխարգելիչ կիրառումը նպաստում է ուսանողների օրգանիզմի հարմարողական հնարավորությունների բարձրացմանը, կարգավորիչ մեխանիզմների գործառույթային օպտիմալացմանը, հոգեհուզական ծանրաբեռնվածությունների հանդեպ դիմադրողականության բարձրացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Аверьянова Н.В.* Особенности психофизиологической адаптации студентов в зависимости от профиля обучения в школе. Дисс. канд. биол. наук., Кемерово, 2016.
2. *Алтынова Н.В., Панихина А.В., Анисимов Н.И., Шуканов А.А.* Физиологическая адаптация студентов младших курсов к учебным нагрузкам в вузе. Вестник ЧГПУ им. И.Я. Яковлева, 65, 1, стр. 8-12, 2010.
3. *Будукоол Л.К., Ховалыг А.М.* Особенности психологического статуса студентов первокурсников в условиях обучения в вузе. Гигиена и санитария, 95, 6, стр. 568-572, 2016.
4. *Геворкян Э.С.* Коррекция ритма сердца студентов пихтовым маслом при физической нагрузке. Валеология, 2, стр. 79-87, 2014.

5. *Ермакова Н.А., Мельниченко П.И., Прохоров Н.И. и др.* Образ жизни и здоровье студентов. Гигиена и санитария, 95, 6, стр. 558-563, 2016.
6. *Кашина Ю.В.* Регуляторно-адаптивный статус у студентов в начале и в конце учебного года. Ж. Фундаментальные исследования, 7, стр. 76-78, 2011.
7. *Маринина М.Г.* Исследование вегетативного баланса организма студента в динамике учебного процесса. Электронный научно-образовательный журнал ВГСПУ “Грани познания”, 25, 5, стр. 119-121, 2013.
8. *Николаевский В.В.* Ароматерапия. М., Медицина, 240 стр., 2000.
9. *Самаров В.В., Гулин А.В., Засядько К.И.* Особенности функционального состояния сердечно-сосудистой системы организма учащихся из стран юго-восточной Азии и Африки в процессе адаптации к процессу обучения в вузе. Вестник ТГУ, 17, 4, стр. 1303-1305, 2012.
10. *Харламов Е.В., Сидоренко Ю.А., Сависько А.А.* Проблема адаптации к учебной нагрузке в системе непрерывного образования. Материалы X международного конгресса “Здоровье и образование в XXI веке” РУДН, М., 364 стр., 2011.
11. *Шведов Д.Н.* Ранние признаки психофизиологических нарушений у студентов-бакалавров в процессе учебной деятельности. Дисс. канд. биол. наук, Орел, 2015.
12. *Шутова С.В.* Немедикаментозная оптимизация функций мозга у студентов при адаптации к условиям обучения в вузе. Тамбов: ТРОО “Бизнес-Наука-Общество”, 365 стр., 2012.
13. *Quintana D.S., Heathers J.A.J.* Considerations in the assessment of heart rate variability in biobehavioral research. Frontiers in Psychology, 5, pp. 1-10, 2014.
14. *Lee M.S., Choi J., Posadzki P., Ernst E.* Aromatherapy for health care: an overview of systematic reviews. Maturitas, 71, 3, pp. 257-260, 2012.

Ստացվել է 26.12.2018



Биол. журн. Армении, 1 (71), 2019

ПОПЫТКА ПРЕДУПРЕЖДЕНИЯ ЭКСПЕРИМЕНТАЛЬНОГО СТРЕПТОЗОТОЦИНОВОГО ДИАБЕТА

КАМАЛЯН Р.Г., ХАЧАТРЯН Р.С., ХАЧАТРЯН Н.Х

Институт биохимии им Г. Бунятына НАН РА
kamalyan37@mail.ru

Добавление в корм в течение месяца монтморилонита и β -аланина с ингибитором ГАМК-Т этаноламин-О-сульфатом (ЭОС) с питьевой водой предотвращает гипергликемический эффект внутрибрюшинного введения химического диабетогена стрептозотцина. Последний при введении интактным крысам снижает концентрацию нейроактивных аминокислот в мозге и поджелудочной железе, чему препятствует месячная подкормка кормовой добавкой, которая нивелирует ингибирующее действие диабетогена на утилизацию глутамата гомогенатами мозга и поджелудочной железы. Полученные данные свидетельствуют о превентивном действии вышеуказанной комплексной подкормки на инициацию диабета стрептозотцином.

Стрептозотцин – диабет – монтморилонит – β -аланин – ГАМК – мозг – поджелудочная железа

Մոնտմորիլոնիտային կերակրային հավելումը և խմելու ջրի հետ β -ալանինի և ԳԱԿԹ-տրանսամինազի արգելակիչ էթանոլամին-Օ-սուլֆատի ներմուծումը 1 ամսվա ընթացքում կանխում է քիմիական շաքարախտածին ստրեպտոզոտոցինի ներորովայնային ներարկման հիպերգլիկեմիկ ազդեցությունը: Վերջինս ինտակտ առնետներին ներարկման դեպքում վիճակագրորեն հավաստի իջեցնում է նյարդաակտիվ ամինաթթուների խտությունը ուղեղում և ենթաստամոքսային գեղձում, ինչին հակազդում է վերոնշյալ համալրային հավելումով միամսյա կերակրումը: Վերջինս նաև թուլացնում է ստրեպտոզոտոցինի արգելակիչ ազդեցությունը գլխուղեղի և ենթաստամոքսային գեղձի հոմոգենատների կողմից գլյուտամինաթթվի յուրացման վրա: Ստացված տվյալները վկայում են վերոնշյալ համալրային կերակրային հավելման կանխիչ ազդեցության մասին ստրեպտոզոտոցինի կողմից փորձարարական շաքարախտ առաջացնելու ունակության վրա:

Ստրեպտոզոտոցին – դիաբետ – մոնտմորիլոնիտ – β -ալանին – ԳԱԿԹ – ուղեղ – ենթաստամոքսային գեղձ

The administration of montmorillonit with food and β -alanine and GABA-T inhibitor ethanolamine-O-sulfate (EOS) with water to rats prevents the hyperglycemic effect of chemical diabetogen streptozotocin intraperitoneal injection. Streptozotocin injection to intact rats statistically proven decreases the level of neuroactive amino acids in brain and pancreas. Referred to above food additive prevents such effect of streptozotocin and its inhibitory action on the glutamate utilization by brain and pancreas homogenates. Obtained data testify the preventive action of used food additive on the diabetes mellitus initiation by streptozotocin.

Streptozotocin – diabet – montmorilonit – β -alanine – GABA – brain – pancreas

О значении ГАМК в функциях поджелудочной железы свидетельствует ряд работ [3-5, 11, 13-15]. Подчеркивается роль этого тормозного трансммиттера как в эндокринной, так и экзокринной функциях, по-видимому, тесно взаимосвязанных [22].

Особое значение приписывается роли ГАМК в функциях продуцирующих инсулин β -клеток [4, 12-15]. Показано наличие сравнимых с мозгом концентраций ГАМК в панкреасе, сосредоточенных в основном в β -клетках, как в везикулах нервных окончаний, так и в инсулярных гранулах [13-15]. Выяснено, что ГАМК способствует синтезу и высвобождению инсулина [12-15]. Возник вопрос о возможной эффективности этой аминокислоты при диабете, тем более что продуцирующий ее фермент глутаматдекарбоксилаза является одной из мишеней аутоиммунного процесса, приводящего к гибели островковых β -клеток [55], т.е. к развитию диабета первого типа (Т1Д). Определение активности антител к ферменту используется в доклинической диагностике Т1Д [11, 16].

